



ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԻԶՈՅՈՎ ԱԿՆԱՐԿ

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԻ
ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Քարտեզագրական առաջին աշխատանքն է եղել 2004 թ. Լոնդոնում անգլերենով հրատարակված «Հայաստանի պատմական քարտեզներ» մեծադիր գիրքը:
- 2005 թվականին Երևանում հրատարակվել է վերի գրքի հայերեն և ռուսերեն տարբերակները՝ «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» վերնագրով: Վերոհիշյալ երկու հատորները ավելի մեծադիր և համակցված վերահրատարակվել են 2015 թ.:
- «Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում», անգլերեն և հայերեն տեքստերով, 2007, Լոնդոն:
- «Հորինված պատմություն» գիրքն անգլերեն 2009–ին՝ Երևանում և Լոնդոնում, իսկ 2010–ին՝ նույնի հայերեն և ռուսերեն տարբերակները:
- «Պատմությունների բախումը հարավային Կովկասում. Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի քարտեզների վերագծումը», հրատարակվել է 2012–ին անգլերեն Լոնդոնում: Իսկ պարսկերենով հրատարակվել է Թեհրանում 2015 թ.:
- Նույն գրքի ռուսերեն և հայերեն տարբերակները կոչվում են «Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները»: Հրատարակվել է 2013 թ. Մոսկվայում և 2017 թ. Երևանում:
- Այս հատորի անգլերեն տարբերակը, որը կոչված է «Հայացք հայոց պատմությանը քարտեզագրական փաստաթղթերի միջոցով», հրատարակվել է անգլերենով 2015 թ. Լոնդոնում:
- «Հայերեն քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թ.», անգլերեն և հայերեն առանձին հատորներով՝ 2017 թ.:
- «Հայաստանը օտարների քարտեզներում», «Հայաստանի պատմական քարտեզներ» գրքի կրճատված և փոփոխված տարբերակն է՝ հրատարակված 2018 թ. Երևանում:
- «Հայաստան, Ադրբեջան և Թուրքիա. մշակութային, աշխարհագրական և պատմական հակասությունների քննարկում», անգլերեն, Ջանգակ, Երևան, 2019:

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
Ակնարկ**

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ



ՉԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2019

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Գ 197

Գ 197 *Գալչյան Ռուբեն*
Հայոց պատմությունը քարտեզների միջոցով: Ակնարկ / Ռ. Գալչյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2019. — 92 էջ:

Սույն գրքի անգլերեն տարբերակը հրատարակվել է 2015 թ.: Հատորը անգլերենի հայերեն տարբերակն է, որտեղ առկա են որոշ փոփոխություններ տեքստի և քարտեզների մեջ:

Այստեղ ներկայացված են Հայոց պատմության փաստերը վկայող և ցուցադրող համաշխարհային կարևորություն ունեցող բազմաթիվ քարտեզներ: Սրանք տալիս են Հայաստանի պատմական վերուվարների քարտեզագրական գրանցումները և վկայությունները, որոնք իրական փաստաթղթեր են՝ պատրաստված ժամանակի լավագույն մասնագետների ձեռքով:

Հրատարակությունը հնարավորություն է տալիս պատմությունով և աշխարհագրությունով հետաքրքրվողներին նաև օտարների քարտեզների մեջ տեսնելու պատմական կարևորություն ունեցող որոշ դեպքեր և պայմաններ, որոնցով անցել է հայ ժողովուրդը: Նկատելի է, որ նույնիսկ անկախ պետականություն չունեցած ժամանակ բոլոր քարտեզներում ներկա Թուրքիայի և Կովկասի հարավային շրջանում կարելի է տեսնել *Հայաստան* արձանագրությունը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-68-745-2

© Գալչյան Ռուբեն, 2019
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2019

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք գնահատանքի	5
Քարտեզների ցուցակ.....	7
Նախաբան.....	9
Ներածական.....	15
Հնագույն ժամանակներ.....	17
Միջին դարեր	29
Ուշ միջնադար	47
Տասնիններորդ դարից մինչ այսօր	56
Ծանոթագրություններ	85
Տեղանունների և հատուկ անունների ցանկ	87

ԽՈՍՔ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Աշխատության ընթացքում կարիք եմ ունեցել օգտվելու բազմաթիվ աղբյուրներից, ինչպես նաև իմ նախկին հրատարակումներից, քանի որ հին և միջնադարյան քարտեզները թվով սահմանափակ են և երբ շարադրում ես հին ժամանակների վերաբերյալ նյութեր, ապա ակամա հաճախ կարիք է լինում դիմելու նույն քարտեզներին: Այդ իսկ պատճառով չեմ ցանկանում նշել բոլոր գրադարանների ու քարտեզների հավաքածուների անվանումները, որոնցից ժամանակին օգտվել եմ:

Սրանց մեջ կարևոր դեր են ունեցել իմ անձնական հավաքածուի քարտեզները, գրականությունը և նյութերը, որոնք տարիներ առաջ նվիրել էի Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանին, և որոնցից օգտվելու համար հաճախ և հաճույքով այցելել եմ այդ հաստատությունը՝ վայելելով Մատենադարանի տնօրինության և աշխատակազմի լիակատար աջակցությունը:

Հատուկ և հազվագյուտ քարտեզներ գտնելու մեջ ինձ օժանդակել են քարտեզագետ Համլետ Սարգսյանը և քարտեզագիր Վարդան Մխիթարյանը, ով սույն աշխատության համար նաև պատրաստել է երկու քարտեզ:

Գրքի տեքստի խմբագրության համար շնորհակալ եմ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Հարություն Մարությունյանին, ով իր օգտավետ առաջարկներով ուղեցույց է եղել աշխատությունս այս վերջնական տարբերակին հասցնելու: Աշխատության հրատարակմանն աջակցելու առթիվ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել «Գառնի ինվեստ» կազմակերպության տնօրեն Բագրատ Ասատրյանին, առանց որի սույն հրատարակության լույսընծայումը չէր կատարվի:

Աշխատությանն անգլերեն տարբերակը հրատարակվել է 2015 թ.՝ որպես ուղեցույց Հայաստանի քարտեզների հատուկ ցուցահանդեսի՝ այն քարտեզների, որոնք արտատպված են սույն աշխատությանն մեջ: Այս 61 քարտեզի ցուցահանդեսը առաջին հերթին ցուցադրվել է Երևանի Կոմիտասի թանգարանում, ապա ՀՀ Արտաքին գործերի նախարարության և դեսպանությունների միջոցով շրջագայել Ռոմինիա, Ավստրիա, Սլովակիա, Լատվիա, Լիտվա և Էստոնիա, որտեղ որպես հեղինակ՝ պաշտոնական բացումներին հանդես ենք եկել պատկերազարդ բացատրական ներկայացմամբ: Յուրահանդեսները կազմակերպելու առթիվ իմ շնորհակալությունն եմ հայտնում բոլոր ՀՀ դեսպաններին ու դեսպանությունների աշխատակազմերին՝ հատկապես ցուցահանդեսները տվյալ երկրների ազգային գրադարաններում և նման կարևոր հաստատություններում բարեհաջող կազմակերպելու համար:

Ռուբեն Գալչյան
Երևան, 2019 թ.

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Համար	Անվանումը	Էջ
1	Բեհիսթունյան սեպագիր արձանագրությունը, մ. թ. ա. 517 թ.	17
2	Բեհիսթունյան արձանագրության տեքստից հատված	17
3	Բաբելոնյան Աշխարհացույց կավե սալիկը, մ. թ. ա. 6-րդ դ.	18
4	Բաբելոնյան սալիկի թարգմանությունը	18
5	Աշխարհին ըստ Հերոդոտոսի, մ. թ. ա. մոտ 450 թ.	19
6	Աշխարհին ըստ Ստրաբոնի, մ. թ. ա. մոտ 64-23 թթ.	20
7	Հայաստանը Տիգրան Մեծի օրոք, մ. թ. ա. 95-55 թթ.	21
8	Հին աշխարհին ըստ օսմանյան դասագրքի, 1910 թ.	22
9	Թիվ 8 քարտեզի տեղանունների թարգմանությունը	22
10	Պտղոմեոսի Մեծ և Փոքր Հայքերը, 2-րդ դ., վերատպված 1482 թ.	23
11	Քրիստոնեության տարածվելն ըստ Բուաշի, 1786 թ.	24
12	Մակրոբիոսի Աշխարհացույցը, 4-րդ դ.	25
13	Հայաստանն Արշակունիների օրոք, 4-րդ դ.	26
14	Մեծ Հայքն ըստ Աշխարհացույցի, թարգմանությունը՝ Ուիսթոնի, 1736 թ.	27
15	Բեդա Երանելու Աշխարհացույցը, 7-րդ դ.	29
16	Հայաստանը Հուստինիանոս Ա-ի օրոք, 536 թ.	30
17	Բեատոս Լիեբանայի Աշխարհացույցը, 8-րդ դ.	31
18	Աշխարհին ըստ Իսիդորի, գծված 11-րդ դ.	32
19	Աշխարհին ըստ Իսթախրիի, մոտ 950 թ.	33
20	Հայաստան, Ադրբեջան և Ադվանք քարտեզը, Իրն-Հաուքալ, մոտ 970 թ.	34
21	Թիվ 20 քարտեզի տեղանունների թարգմանությունը	35
22	Հարավային Կովկասն ըստ Իդրիսիի, 1154 թ.	36
23	Կիլիկիայի Հայկական թագավորությունը, 1199-1375 թթ.	37
24	Իսիդորի Աշխարհացույցը ֆրանսերենով, 12-րդ դ.	38
25	Դուլսերտի պորտոլան քարտեզից Արևելյան Միջերկրականը, 1339 թ.	39
26	Միջին Արևելքն ըստ Մաթթյու Փարիսի, 1252 թ.	40
27	Հարավային Կովկասն ըստ Էբսթորֆյան քարտեզի, 1232 թ.	41
28	Ֆրա Մաուրոյի Աշխարհացույցը, 1460 թ.	42
29	Քարտեզ 28-ից Կովկասից հարավ ընկած տարածքը	43
30	Օրտելիոսի Աշխարհացույցը, 1595 թ.	44
31	Կովկասի տարածքը քարտեզ 30-ից	44
32	Ֆլորենցիայի Պալացցո Վեքքիոյից Հայաստանի քարտեզը, 1575 թ.	45
33	Ջերարդուս Մերկատորի Ասիայի քարտեզը, 1619 թ.	48
34	Կովկասի հատվածը քարտեզ 33-ից	49
35	Վանի քարտեզն ըստ Քյաթիր Չելեբիի, 1653 թ.	50
36	Քարտեզ 35-ի տեղանունների թարգմանությունը	50
37	Հատված Դյու Վալի Ասիական Թուրքիայի քարտեզից, 1676 թ.	51

38	Իրանի քարտեզն ըստ Մութաֆարրիկայի, 1723 թ.	52
39	Իրանի, Թուրքիայի և Ռուսաստանի սահմանը, Օտիենզ, 1740 թ.	53
40	Հատված դ'Անվիլի Պարսկական կայսրությունը քարտեզից, 1790 թ.	54
41	Կովկասը 1801–1813 թթ. ժամանակաշրջանում	56
42	Ռազմական քարտեզ, 1827 թ.	57
43	Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի սահմանները 1828 թ. հետո	58
44	Ռուսական կայսրության Հայկական մարզը, 1830 թ.	59
45	Իրանի հյուսիսարևմտյան շրջանն ըստ Ղարաշեդադիի քարտեզի, 1869 թ.	60
46	Ցարական Ռուսաստանի գրաված տարածքը Կովկասում, 1860 թ.	61
47	Ռուս–թուրքական պատերազմական քարտեզ, 1877 թ.	62
48	Ռուս–թուրքական սահմանը 1878 թ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմը	63
49	1894–1896 թթ. Սասունի կոտորածների և արտագաղթի ճանապարհների քարտեզը	64
50	Վանի հատակագիծն ըստ Մյուլլեր–Սիմոնիսի, 1914 թ.	67
51	Վանի ինքնապաշտպանության քարտեզն ըստ Խերանյանի, 1915 թ.	68
52	Վանի քաղաքամեջի դիրքերը քարտեզ 51–ից	70
53	Վայրը, որտեղ ժամանակին Վանի քաղաքամեջն էր, 2010 թ.	70
54	1915–1923 թթ. իրականացված Հայոց ցեղասպանության հիմնական վայրերը	71
55	Սևրի դաշնագրի Ուիլսոնի քարտեզը, 1920 թ.	74
56	Հայաստանի առաջին հանրապետության նախնական սահմանները, 1919 թ.	75
57	Հարևան և խորհրդային հանրապետություններին զիջված հայկական տարածքները	76
58	Խորհրդային Հայաստանը 1928 թ.	77
59	Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մինչև 1990 թ. Նշված են ՀՀ–ի և ԼՂԻՄ–ի տարածքները, որոնք 1925–1938 թթ. գրավեց Ադրբեջանի Հանրապետությունը	78
60	Երևանի թամանյանական հատակագիծը, 1932 թ.	79
61	Հայաստանի և Արցախի հանրապետությունների քարտեզը, 2014 թ.	82

Կազմի առաջին և վերջին էջերի քարտեզները պատրաստել են Անտանոյի անդամ երկրները 1918–1920 թվականներին, երբ քննարկում էին Հայաստանի հնարավոր սահմանները:

Քարտեզների աղբյուրները

Քարտեզներ 10, 15, 19 և 26 – Բրիտանական գրադարան

Քարտեզ 18 – Մյունխենի պետական գրադարան

Քարտեզ 20 – Ստամբուլի Թոփքափի թանգարան

Քարտեզ 25 – Փարիզի ազգային գրադարան

Քարտեզներ 28 և 29 – Մարչիանա գրադարան, Վենետիկ

Քարտեզներ 41, 45 և 58 – Համլետ Սարգսյան, Երևան

Քարտեզներ 42 և 43 – Հայաստանի ազգային գրադարան, Երևան

Քարտեզ 55 – Կոնգրեսի գրադարան, ԱՄՆ

Քարտեզներ 60 և 61 – Վարդան Մխիթարյան, Երևան, հատուկ գծված ներկա հատորի համար

(կապույտով արված հավելումները հատորիս հեղինակինն են)

Մյուս քարտեզները Ռ. Գալչյանի անձնական արխիվից են, Երևան, Մատենադարան, Ռ. Գալչյան ֆոնդ

ՆԱԽԱԲԱՆ

Պատմական տեղեկությունները մեզ են փոխանցվում գրի առնված տեքստերով, որոնց մեջ երբեմն տեղադրվում են պարզ քարտեզներ կամ քարտեզանման էքսիզներ ու գծագրություններ՝ պարունակությունն ավելի տպավորիչ և ընկալելի դարձնելու նպատակով: Սակայն այդ քարտեզները շատ հաճախ ավելի գեղագիտական գործառույթներ ունեն, քան թե օգտակար: Ներկա աշխատության մեջ դրանց նախընտրության հերթականությունը փոխել ենք, այսինքն՝ առաջին հերթին ներկայացնում ենք պատմական քարտեզները, ապա գրավոր բացատրում դրանց պարունակած տեղեկությունները և այդ միջոցով ներկայացնում պատմությունը կամ, ավելի ստույգ, որոշ պատմական տեղեկություններ, որոնք ցուցադրում է արտատպած քարտեզը:

Պետք է նաև նշել, որ պատմական իրադարձություններից ու դեպքերից հիմնականում միայն կարևորներն են, որ տեղ են գտել մասնագետների գծած և միջազգայնորեն ճանաչված քարտեզներում:

Հին աշխարհում նորագույն աշխարհագրական տեղեկությունները տեղ էին հասցվում ճամփորդների միջոցով, և դա կարող էր տևել տարիներ: Միջին դարերում տեղեկությունների փոխանցումն արագացավ, և նորությունները կարող էին տեղ հասնել մի քանի շաբաթվա կամ մինչև անգամ մի քանի ամսվա ընթացքում: Սա մեծ առաջընթաց էր, սակայն մեր օրերում, շնորհիվ տեխնոլոգիայի զարգացմանը, լուրերը կարող են մի քանի վայրկյան անց տարածվել ամբողջ աշխարհով:

Հնագույն ժամանակներում, ընդհուպ մինչև միջնադար, մինչև քսաներորդ դարի էլեկտրոնային կապերի և հաղորդակցության զարգացումը, սահմանների իրական փոփոխություններից մինչև քարտեզների վրա դրանց անդրադարձումը պահանջում էր համեմատաբար երկար ժամանակ: Սակայն մինչև քարտեզների վրա նոր սահմանների երևան գալը դրանք մեծ հավանականությամբ արդեն իսկ փոխված և հնացած էին լինում: Այս իրողությունը քարտեզը դարձնում էր անվատահեղի և ոչ ճշգրիտ, որն, իհարկե, ոչ մեկի համար ցանկալի չէր:

Հավանաբար այս պատճառով էր, որ նույնիսկ մինչև 15-րդ դարը քարտեզների մեծամասնության մեջ երկրների սահմաններ չէին նշվում, և երկրամասերը կոչվում էին տեղաբնակ ժողովուրդների անուններով: Այդ պատճառով էլ, երբ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի սահմաններն արդեն իսկ միջազգայնորեն ճշտված և գծված էին, սակայն մինչև 1923 թ. Հայաստանի շրջանը ցուցադրող եվրոպական քարտեզների մեծամասնության մեջ՝ Մուշից մինչև Արցախ ընկած տարածաշրջանում, տեսնում ենք «Հայաստան» անվանումը¹: Դա նշում էր, որ տվյալ տարածքում բնակվում է հայ ժողովուրդը: Սակայն 1915–1923 թթ. ցեղասպանության միջոցով Օսմանյան կայսրության իրականացրած էթնիկ զտումից հետո Մեծ Հայքի տարածքում ապրող և իրենց հայ համարող հայեր գրեթե չկային, ուստի ըստ Թուրքիայի պատճառաբանության՝ այդ անվանման օգտագործումն իրականությունը չէր համապատասխանում²:

¹ Տարածքի անվանման վերաբերյալ կարևոր օրինակներից մեկն այն է, որ 1375 թ. մինչև 1918 թ., երբ Հայաստանն անկախ պետականություն չուներ, արևմտյան բոլոր քարտեզներում երկրի անունը նշվում է Մեծ Հայքի մոտավոր տարածքի վրա:

² Նույն ժամանակ տվյալ շրջանում ապրել են բազմաթիվ կրոնափոխ հայեր, որոնք վախենում էին իրենց ինքնությունը բացահայտելուց: Միայն վերջերս է, որ դրանց մի որոշ մասը սկսեց բացեիբաց խոսել իրենց հայ լինելու մասին: Ըստ Հրանտ Դինքի՝ դրանց իրական թիվը կարող է հասնել հարյուր հազարների:

Աշխարհագրական տեսակետից Հայաստանը տեղակայված էր Բյուզանդական, ապա Օսմանյան ու Պարսկական հսկա կայսրությունների միջև, որոնց համար ռազմադաշտ էր, և «ոտքի տակ» լինելով՝ մշտապես տուժում էր: Ուշ միջնադարում դրանց ավերացավ նաև Ռուսական կայսրությունը, որը հզորացել էր և ծրագրում էր տարածվել դեպի հարավ: Այսպիսով Հայաստանի իրավիճակն ավելի բարդացավ ու դարձավ օրհասական:

Պատմականորեն «Հայաստանի» կամ «Մեծ Հայքի» շրջանը Անատոլիայից դեպի արևելք և Կովկասի հարավում ընկած տարածաշրջանում է: Նրա մոտավոր սահմաններն են արևմուտքում Եփրատը, Մալաթիան ու Խարբեղը (ներկայում՝ Էլազիգ), հյուսիս–արևելքում՝ Սևանից դեպի արևելք ընկած շրջանը, հյուսիսում՝ Լոռին ու Արդվինը, հարավում Տավրոսյան լեռների հյուսիսային փեշերն ու Դիարբեքրի շրջանը: Աշխարհագրական այս տարածքն է, որ կոչվում է «Հայկական բարձրավանդակ» կամ «Հայկական լեռնաշխարհ»:

Այս տարածքին տրված «Հայաստան» անունը տեսնում ենք մ.թ.ա. 6–րդ դարից սկսած մինչև 1920–ական թվականները: Այս անունն անընդմեջ մինչև 1920–ական թվականների սկիզբը օգտագործել են գրեթե բոլոր արևելյան և արևմտյան աշխարհագրագետներն ու քարտեզագետները³: Ադրբեջանի Հանրապետությունը, որը հիմնադրվել է 1918 թվականին, վերցրել է իր հարավային հարևան երկրամասի՝ Իրանի Ատրպատական–Ադրբեջան նահանգի անունը. հայտնի է, որ մինչ այդ Արաքսի հյուսիսային ափերին նման անունով երկիր երբևէ գոյություն չի ունեցել: Այսօր Ադրբեջանի Հանրապետության իշխանավորները և նրանց թելադրանքով նաև պատմաբանները հայտարարում են, որ իրենք ունեն 2000 տարվա պետականություն, իսկ հայերն այստեղ են հայտնվել 19–րդ դարի առաջին քառորդին, որոնց տարածաշրջան բերեցին Գրիբոյեդովն ու ցարական Ռուսաստանի զորքերը:

Ադրբեջանի իշխանություններն իրենց հայտարարությունները փաստելու համար կամ յուրացնում են հայկական մշակութային կոթողները, կամ էլ, եթե դա հնարավոր չէ, պարզապես դրանք ոչնչացնում են: Նման գործելաոճի վերջին դրսևորումներից մեկը Զուղայի միջնադարյան հայկական գերեզմանաքարերի և խաչքարերի խապառ բնաջնջումն է⁴: Պարզ է, որ եթե նորաստեղծ ազգ ես ու ցանկանում ես ունենալ յուրօրինակ հնագույն պատմություն և մշակույթ, ուրիշ միջոց և ճանապարհ գոյություն չունի բացի այն, որ տեղում եղածը, այսինքն՝ ուրիշները յուրացնելը և այդ մշակույթի տիրոջն էլ տարածաշրջանում «նորեկ»⁵ անվանել: Ինչպես նշվեց, այս գործին լրջորեն լծված են Ադրբեջանի պատմաբաններն ու աշխարհագրագետները՝ վայելելով երկրի նախագահի և իշխանավորների հովանավորությունն ու նյութական օժանդակությունը:

Թուրքիայի կողմից Հայաստան երկրի գոյությունը մերժելու պատճառն էլ իրենց իրականացրած Ցեղասպանությունը հերքելու ու քողարկելու միջոցներից է: Եթե Հայաստանը և հայերն այդ տարածաշրջանում, այսինքն՝ Անատոլիայից արևելք ընկած երկրամասում, այլ կերպ ասած՝ Հայկական բարձրավանդակում, գոյություն չեն ունեցել, ապա Ցեղասպանությունն իրականում չէր կարող կատարված լինել: Երկրորդ անուղղակի և ծրագրված կեղծիքը, որն արդեն իսկ հաստատվել և ընդունվել է համարյա բոլորի կողմից, դա Փոքր Ասիայի Անատոլիա անվան տարածումն է Թուրքիայի ամբողջ տարածքի վրա: Այս աշխարհագրական անվանափոխումով հիմնականում վերացվում է Հայկական

³ Այստեղ առկա են մի քանի բացատրություններ, որտեղ օսմանյան և թուրքական քարտեզներում «սխալմամբ» սպորդել է «Հայաստան» անունը:

⁴ Տե՛ս Ռուբեն Գալսյան, Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան, Կեղծիքներ և փաստեր: Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ հրատ., 2008, էջ 189–198:

⁵ Տե՛ս Ռուբեն Գալսյան, Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները, Երևան, Չանգակ հրատ., 2017, էջ 77–126:

լեռնաշխարհ–բարձրավանդակի անունը՝ այն ընդգրկելով Անատոլիա տեղանվան վերջերս ընդլայնված սահմաններից ներս:

* * *

Հարց է ծագում, իսկ ինչու՞ է անհրաժեշտ պատմությունը ներկայացնել քարտեզների միջոցով: Պատասխանը շատ պարզ է: Ասենք՝ ցանկանում ենք տեղեկություններ ստանալ մի փոքր երկրամասի միջնադարյան քաղաքական սահմանների վերաբերյալ, և եթե հնարավոր լինի այդ տեղեկությունները ստանալ մի քանի հեղինակների քարտեզներից, ապա ստացված պատկերը կլինի համեմատաբար վստահելի: Պետք է նշել, որ հեղինակներից ոմանք, որոշ դեպքերում տուրք են տալիս իրենց երկրի պատմագրության մեջ ընդունված մոտեցումներին, երբեմն էլ քարտեզ պատրաստելիս նախընտրում են ներկայացնել այն ըստ իրենց անձնական տեսանկյունի և այդպիսով խախտում իրական դրվածքը: Սակայն նույն բանը չի կարելի ասել պատմաբանների և պատմության գրքերի մասին, որոնց հեղինակների մեկ մասը որոշ կողմնակալություն և հակում են ունեցել իրենց ընտրած վայրի, ժամանակաշրջանի ու պատմության նկատմամբ: Առավել ևս, ավելի դժվար է Հարավային Կովկասի նման մի փոքր շրջանի մասին պատմագրական տարբեր և անկողմնակալ այնպիսի հին աղբյուրներ գտնել, որոնք խնդիրը դիտարկում են անաչառ, հաղորդում են չեզոք և իրական տեղեկություններ: Այսպիսով՝ նույն պատմական դեպքերը քննարկելու համար հաճախ դժվար է լինում մեկից ավելի անկախ պատմական սկզբնաղբյուր գտնել, և իրական պատկերը ստանալու համար դրանք իրար հետ համեմատել: Այս տեսանկյունից շատ բնութագրական են Հյուսիսային Աֆրիկայի Թունիս քաղաքում ծնված հանրահայտ արաբ պատմիչ և գիտնական Իբն Խալդունի (1332–1406) «Ալ-Մուքաբադիմա» (Պատմության սկիզբը) աշխատության մեջ պատմաբանների համար ներկայացված յոթ կարևոր խրատներն ու հորդորները⁶:

Իհարկե, հնարավոր է հատուկ քաղաքական նպատակների համար պատրաստել նաև կեղծված քարտեզներ, մի հանձնարարություն, որը ներկայում եռանդագին իրականացնում են Ադրբեջանի Հանրապետության քարտեզագիրները⁶: Օրինակ՝ 1994 թ. Բաքվում հրատարակված «Ադրբեջանի պատմական քարտեզները» ատլասի միջնադարից մինչև 1920 թ. քսան քարտեզի մեջ Արաքսի շրջակայքում Հայաստան կամ Իրան անունը չի նշվում: Միայն վերջին քարտեզն է ցուցադրում Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը: Նման քարտեզներ պատրաստվում են միայն քաղաքական հետին նպատակների ծառայելու, այլ ոչ թե միջազգային հանրության գործածության համար: Նույն ժամանակները պատկերող, բայց այլ աղբյուրներից մեզ հասած քարտեզները (ներառյալ բոլոր իսլամական քարտեզները) այլ պատկեր են առաջարկում, և մասնավորապես Հարավային Կովկասում նշում են երեք երկիր՝ Հայաստան, Աղվանք և Պարսկական Ադրբեջան նահանգը⁷:

Տվյալ փոքր տարածաշրջանի քարտեզները հաճախ ավելի բազմաթիվ են, քան նույնին վերաբերող և ներկայում գոյություն ունեցող պատմական սկզբնաղբյուրները: Այսպիսով՝ որևէ աշխարհագրական շրջանին վերաբերող տարբեր անկողմնակալ հեղինակների քարտեզները հնարավոր է զուգադրել և ստանալ տեղանքի համեմատաբար ճշգրիտ պատկերը: Մյուս կողմից՝ մեծահամբավ քարտեզագետներն իրենց հերթին, որպես կանոն, աշխատում են պատրաստել հնարավորինս ճշգրիտ քարտեզներ, որոնք արժանի են իրենց կոչմանն ու անվանը, ինչպես նաև ընդունված են մասնագետների կողմից:

⁶ Ադրբեջանի նախագահն իր պատմաբաններին պատվեր տվեց շարադրելու պատմության գրքեր՝ փաստելու, որ հայերը նախքան 1828 թ. Կովկասի հարավում գոյություն չունեին: Տե՛ս Ռուբեն Գալսյան, *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեոմարտություններ*, էջ 44–45:

⁷ Նույն տեղում, էջ 145–147, 189–194:

Միայն գծած քարտեզները հեղինակին քննադատելու առիթ կտան, որից նրանց համբավը կտուժի, ինչը ցանկացած մասնագետի համար հույժ անցանկալի մի երևույթ է:

Եվս մի հանգամանքի վրա ենք ուզում ուշադրություն հրավիրել: Այսպես՝ միջնադարյան եվրոպական քարտեզները, որոնք պատրաստվում էին քրիստոնյա եկեղեցական հայրերի թելադրանքով, հաստատում էին նրանց շարադրած դոգմաները: Մինչդեռ մեր թվարկությունից առաջ հունահռոմեական աշխարհում ընդունված էր, որ մեր աշխարհն իրապես գնդաձև է, սակայն 6-րդ դարից սկսած, վանական հայր Կոզմա Աղեքսանդրիացու թելադրանքով և պահանջով, քարտեզները սկսեցին պատրաստվել ըստ Սուրբ Գրքի դոգմաների, և այդուհետ՝ շուրջ ութ դար, քրիստոնյա աշխարհի քարտեզներում աշխարհը պատկերվում էր որպես քառանկյուն կամ շրջանաձև սկավառակ՝ շրջապատված դառը կամ աղի ջրերով, իր կենտրոնում ունենալով Երուսաղեմը՝ արևելքով ուղղորդված վեր⁸:

* * *

Այս հատորում աշխատել եմ հավաքել պատմականորեն և քարտեզագրական տեսակետից ընդունված և ճշգրիտ քարտեզներ, որոնց վրա հիմնվելով՝ կարելի է պատմական իրադարձությունները որոշ չափով բացատրել և պարզաբանել: Ընտրված քարտեզագետներն ու աշխարհագրագետները նրանք են, որոնք քաջատեղյակ են եղել Հայաստանի և այդ շրջանի անցյալին ու աշխարհագրությունը:

Աշխատության նպատակն է քարտեզների օգնությամբ մեկնաբանել պատմական կարևոր իրողությունները: Քարտեզների հեղինակները գերազանցապես օտար մասնագետներ են՝ հույն, հռոմեացի, պարսիկ, արաբ, օսմանցի, արևմտյան եվրոպացի, ռուս և այլն: Վերատպված քարտեզներից միայն վերջին մի քանիսն են, որ պատրաստել են հայազգի մասնագետները:

Աշխատության մեջ վերատպված քարտեզների մի մասն առկա է իմ նախկին հրատարակություններում: Սակայն դրանցում քարտեզները դիտարկվում էին այլ տեսանկյունից, մինչդեռ այստեղ դրանք քննարկված են որպես պատմական իրողությունների փաստեր և աղբյուրներ:

Ինչպես նշվեց, համարյա անհնար է բոլոր պատմական անցքերը ներկայացնել լոկ քարտեզագրությամբ, հետևաբար դրանցով կարելի է ցուցադրել առնվազն երկրների սահմանների մշտական փոփոխվող և հեղհեղուկ իրավիճակը: Այդ պատճառով էլ իրար հաջորդող պատմական դեպքերի նկարագրությունները ներկայացված են հաճախակի ընդհատումներով և ընդմիջումներով: Նաև հասկանալի է, որ քարտեզում նշված փոփոխությունները անկարող են ներկայացնել տվյալ դեպքերի պատճառները, շարժառիթներն ու դրանց մանրամասները:

* * *

Անդրադառնանք տեքստում գործածված տեղանուններին ու եզրերին: Երբ տեքստում գրված է Ալբանիա, սա վերաբերում է Կովկասյան Ալբանիային կամ Աղվանքին, որը Եվրոպայի Ալբանիա երկրի հետ ոչ մի առնչություն չունի: Աղվանք–Ալբանիան հնադարյան տարածաշրջան էր, բնակեցված տարբեր՝ հավանաբար շուրջ 26 ցեղախմբերով⁹, որոնք չորրորդ դարում ընդունեցին քրիստոնեությունը: Նրանց մեծամասնությունը 7-րդ դարում կրոնափոխվեց ու դարձավ մահմեդական: Միայն մի քանի

⁸ Ռուբեն Գալյան, *Կովկասից հարավ երկրների միջնադարյան քարտեզներում*. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան. Երևան, Փրինթինֆո, և Լոնդոն, Կոմիտաս ինստիտուտ, 2007, հայերեն հավելվածի էջ 29–32: Պատկերազարդ գիրքը հրատարակվել է անգլերեն, որին կից ամբողջ տեքստի հայերեն թարգմանությունն է՝ որպես հավելված:

⁹ Տե՛ս Ստրաբոն, *Աշխարհագրություն*, հատոր 11, գլուխ 4, պարբ. 1, 6 և 7:

փոքր ցեղեր, ինչպես, օրինակ՝ ուղիները, մնացին քրիստոնյա: 10–12–րդ դդ. Ալբանիա–Ադվանք անունը քարտեզներից վերացավ, շրջանում ստեղծվեցին մանր իշխանություններ ու իսլամական խանություններ, որոնք հարկ էին տալիս տիրող իշխաններին ու ցեղապետերին: Որոշ ժամանակ դրանց մեջ էին նաև Ղարաբաղի հինգ մելիքները, որոնք կիսանկախ էին և ուղղակի տուրք էին տալիս պարսից կամ օսմանցի նահանգապետերին: Վերջին մի քանի դարերի ընթացքում՝ նույնիսկ մինչև 20–րդ դարասկիզբը, այս շրջանը կոչվում էր Շիրվան, իսկ 1918 թ.՝ հարավկովկասյան երեք անկախ հանրապետությունների հիմնադրումից հետո, Շիրվանի շրջանն անվանվեց Ադրբեջան՝ յուրացնելով Արաքսից հարավ ընկած պարսկական Ադրբեջան նահանգի հնագույն անունը, որը հայերը կոչում են դրա հին՝ «Ատրպատական» անունով¹⁰:

Արաքսից հյուսիս ընկած Ադրբեջանի անունը նշվում է ամբողջությամբ՝ որպես «Ադրբեջանի Հանրապետություն», որպեսզի պարսկական «Ադրբեջան» նահանգի հետ չչփոխվի: Պարսկաստանի հյուսիսարևմտյան այդ նահանգը նախկինում Փոքր Մարաստանն էր, սա երկու հազարամյակ առաջ վերանվանվեց «Ատրոպատեն»¹¹, որը, հատկապես արաբների արշավանքներից հետո տրոհվելով, դարձավ «Ադրբեջան» կամ «Ազերբայջան», իսկ հայերենում անունը պահպանվել է հնագույն տարբերակով, այն է՝ «Ատրպատական»: Պարսկական Ադրբեջան նահանգը, որը նախկինում մեկ մեծ նահանգ էր, այժմ բաժանված է երեք մասի, որոնք կոչվում են «Արևմտյան Ադրբեջան», «Արևելյան Ադրբեջան» և «Արդաբիլ»:

«Ղարաբաղ» անվանումը գործածված է ընդհանրապես Լեռնային Ղարաբաղը՝ հայկական «Արցախը», նշելու համար, քանի որ ոտասական և եվրոպական գրականության մեջ այս տեղանունն առավել տարածված է:

Երբ նշվում է «Թուրքիա» կամ «Թուրքական կայսրություն» անունը (որը եվրոպական քարտեզների մեջ հաճախ ենք հանդիպում), ապա եթե դրանք վերաբերում են նախքան 1923 թվականն ընկած ժամանակաշրջանին, ուրեմն խոսքը Օսմանյան կայսրության մասին է, այլ ոչ թե ներկա Թուրքիայի Հանրապետության¹²:

Աշխատության վերջին գլխում պատմական տվյալներն ավելի մանրամասն են բացատրված, քան նախկին գլուխներում: Նպատակը ընթերցողին ներկա Հայաստանի և դրա ստեղծմանը նախորդող ժամանակաշրջանում դեպքերի զարգացումներին ծանոթացնելն է, որոնք մեծապես ազդել են անկախ հանրապետության պատմության ու ինքնության ձևավորման վրա:

Պետք է նշել, որ այս աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է անգլերենով 2015 թ.¹³, որը որոշեցինք թարգմանել հայերեն: Սակայն ելնելով նրանից, որ անգլերեն գիրքը շարադրվել էր օտար ընթերցողի համար, որոշեցինք այն ոչ թե պարզապես թարգմանել, այլ նորովի վերաշարադրել, որի արդյունքն այս հատորն է:

Ռուբեն Գալիչյան (Գալիչյան)
Լոնդոն և Երևան, 2019 թ.

¹⁰ Մանրամասն տե՛ս Ռ. Գալիչյան, *Ադրբեջանական պատմասշխարհագրական գեոճարտությունները*, նշված աշխ., էջ 19–28: Այս նյութին հանգամանորեն անդրադարձել է պարսիկ Պրոֆ. Բնայաթոլլահ Ռեզան իր *Ազերբայջան և Առան* աշխատությունում՝ հրատարակված պարսկերենով 1980 թ., ապա նաև անգլերենով *Azerbaijan & Aran*, London: Bennett & Bloom, 2014: Առկա է նաև գրքի Երվանդ Փափազյանի հայերեն թարգմանությունը, *Ազերբայջան և Առան*, Երևան, Փյունիկ հրատ., 1994:

¹¹ Տե՛ս Ռ. Գալիչյան, *Ադրբեջանական պատմասշխարհագրական գեոճարտությունները*, նշված աշխ., էջ 25–27:

¹² Իրականության մեջ Թուրքական կայսրություն անվանումը սխալ է, քանի որ նախկինում այն եղել է Օսմանյան կայսրություն, իսկ այժմ առկա է որպես Թուրքիայի Հանրապետություն: Այս երկու անունները հաճախ տեղեկությունների պակասի պատճառով ճիշտ չեն գործածվում:

¹³ Rouben Galichian, *Glance into the History of Armenia through Cartographic Records*, London: Bennett & Bloom, 2012.

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայերի հայրենիք Հայաստանը, այսինքն՝ Մեծ Հայքը, Կովկասից հարավ և հարավարևմուտքում, նաև Փոքր Ասիայից արևելք ընկած մի ծավալուն լեռնային երկարամաս է՝ աշխարհագրորեն ճանաչված որպես Հայկական լեռնաշխարհ կամ Հայկական բարձրավանդակ: Դեպի արևմուտք Մեծ Հայքը հասնում է մինչև Եփրատի ափերը, Մալաթիան և Խարբերդը, իսկ դեպի արևելք՝ մինչև Լեռնային Ղարաբաղ կամ Արցախ ու Ատրպատական: Հյուսիս-հարավ ուղղությամբ Մեծ Հայքը տարածվում է Սևանա լճի հյուսիսից մինչև Վանա լճից հարավ ընկած շրջանը:

Հայկական բարձրավանդակի միջին բարձրությունը ծովի մակարդակից շուրջ 1600 մետր է և ունի չոր և ցուրտ լեռնային եղանակ: Ամենաբարձր լեռն Արարատն է: Ըստ վերջին հաշվարկների՝ այն ունի 5137 մ բարձրություն, որն այժմ Թուրքիայի Հանրապետության տարածքում է:

Վաղ միջնադարում առկա էր նաև Փոքր Հայքը, որը տեղակայված էր Եփրատի արևմտյան ափերի մոտ Երզնկա (Էրզինջան) քաղաքի շրջանում, իսկ 11-րդ դարից սկսած հայ իշխանների ուշադրությունն արժանացավ Միջերկրական ծովի հյուսիսարևելյան անկյան Կիլիկիա երկիրը, որտեղ 10-րդ դ. հիմնվեցին իշխանություններ, ապա 1198 թ. մինչև 1375 թ. հիմնադրվեց և աշխույժ քաղաքական ու առևտրական կյանք ապրեց Կիլիկիայի Հայկական թագավորությունը:

Յոթերորդ դարից սկսած Կենտրոնական Ասիայի թուրքական ցեղերը սկսեցին հասնել մինչև Պարսկաստանի և Հայաստանի տարածքները: 11-րդ դարում այստեղ հասան սելջուկ ցեղերը, որոնց հաջորդեցին մոնղոլների ու թուրքմեն այլ ցեղախմբեր: Այս նորեկներն ամբողջովին խախտեցին տեղի ժողովրդագրությունը, ու Ատրպատականի բնիկ ազերիներին, որոնք խոսում էին հնագույն իրանական փահլավի լեզվի տարբեր բարբառներով, պարտադրեցին ընդունել իրենց լեզուն¹ թուրքերենը:

Նախկին Խորհրդային Հայաստանը, որն անկախությունից հետո դարձավ ներկա Հայաստանի Հանրապետությունը, ունի 29743 քառ. կմ տարածք, որը պատմական Մեծ Հայքի տարածքի միայն շուրջ 10 տոկոսն է կազմում: Արցախի Հանրապետության ներկայիս տարածքն էլ կազմում է 4800 քառ. կմ, որը հայերը կարող են կոչել իրենց հայրենիքի վերադարձված մի մասնիկը:

Ըստ հնագիտական պեղումների՝ Հայկական լեռնաշխարհի տարածքն անընդմեջ բնակվել է՝ սկսած վաղ քարի դարից: Նախահայկական ցեղերը այս կազմավորումների էթնիկ բաղադրուցիչներից մեկն էին, եթե ոչ գերակշռողը: Նրանք կազմում էին նաև Հայկական լեռնաշխարհի տարածքում դասական արևելյան տիպի պետության՝ Ուրարտուի (մ.թ.ա. 9-6-րդ դարեր) բնակչության գլխավոր բաղադրուցիչը: Ուրարտուի անկումից հետո հայկական պետական կազմավորումները շարունակաբար հաջորդեցին մեկը մյուսին մինչև 5-րդ դարը (երբեմն ընդարձակ սահմաններով, որոնք գերազանցում էին անգամ Հայկական լեռնաշխարհի տարածքը, ինչպես որ էր մ.թ.ա. առաջին դարում՝ Տիգրան Մեծի օրոք)²:

Չնայած այն պարագային, որ նախահայկական ցեղերը գոյություն են ունեցել մինչև մ.թ.ա. 6-րդ դ., բայց վերակազմավորված երկիրը, ընդունելով Հայաստան անունը, նոր սկիզբ արձանագրեց: Հարևան երկրները մեր երկիրը սկսեցին անվանել Էրմինա, Էրմենիյա, Արմինիյա և Արմենիա: Այս ժամանակաշրջանը համընկնում է Բեհիսթունի արձանագրության և Բաբելոնյան կավե սալիկի վրա փորագրված սեպագիր գրություններին, որոնցով սկսում ենք սույն աշխատությունը:



Քարտեզ 3. Բաբելոնյան Աշխարհացույց կավե սալիկը, մ. թ. ա. 6–րդ դար:

Ներկայում հնագույն և ամենակարևոր աշխարհացույց քարտեզը մի փոքրիկ բաբելոնյան կավե սալիկ է՝ 8 x 12,5 սմ չափերով, որը պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում և համարյա ժամանակակից է Դարեհ Մեծի արձանագրությունը:

Տիեզերքի բաբելոնյան պատկերումը համընկնում է պարսկական ժամանակաշրջանին, երբ Բաբելոն քաղաքը համարվում էր աշխարհի կենտրոնը: Այստեղ բուն աշխարհը ցույց է տրված որպես մի շրջանաձև սկավառակ, որի վերևում՝ հյուսիսում՝ այն լեռներն են, որտեղից սկիզբ է առնում և դեպի հարավարևելք հոսում Միդրատ գետը՝ անցնելով «Բիթ Յակինու»-ի վրայով (Մովի երկիր), որը հավանաբար Պարսկաստանն է: Մեջտեղում է աշխարհի կենտրոն Բաբելոնը՝ շրջապատված «Դաղը ջրերով»: Բաբելոնից հյուսիս-արևելք է Ասորեստանը, իսկ դրա հյուսիսում է Ուրարտու-Հայաստանը: Յուր ին տրված Դերի և Հաբբան քաղաքները, ինչպես նաև մի քանի ուրիշ անանուն քաղաքներ:

Աշխարհը շրջապատող յոթ եռանկյուն կղզիների բացատրությունները տրված են սալիկի հակառակ կողմում:




Քարտեզ 4. Արձանագրությունների թարգմանություն:

Հին հունահռոմեական շրջանից մեզ հասած գրավոր փաստաթղթերն ընդհանրապես սահմաններ չեն նշում, և տարածքներն անվանվում են այնտեղ ապրող ժողովուրդների անուններով: Այս ձևով շարունակվեց ավելի քան մեկուկես հազարամյակ՝ մինչև տպագիր քարտեզների երևալը: Նույնիսկ մինչև 15-րդ դ. տպագիր քարտեզների մեծամասնության վրա սահմաններ չէին նշվում:

Իր «Պատմություն» հատորում պատմահայր Հերոդոտոսը Հայաստանի մասին գրում է ութ տարբեր տեղերում: Եվրոպացի բազմաթիվ քարտեզագիրներ և մասնագետներ պատրաստել են աշխարհացույց քարտեզներ՝ ըստ Հերոդոտոսի շարադրանքի, որոնք նմանակում են միմյանց: Այս մասնագետներից ամենահայտնիներն են գերմանացիներ Կառլ Մյուլլերն ու Կոնրադ Միլլերը, ինչպես նաև անգլիացի Ջոն Մըրրին, որոնց վերականգնումներն ամենաընդհանրացվածներն են:

Այս քարտեզում, որը Կառլ Մյուլլերի վերականգնումն է, Հայաստանը տեղադրված է քարտեզի կենտրոնում, Սև և Կասպից ծովերից հարավ ընկած տարածքում՝ շրջապատված Մարաստանով, Ասորեստանով և Կապադովկիայով:




Քարտեզ 5. Հերոդոտոսի մ.թ.ա. 5-րդ դարի Աշխարհացույցը՝ ըստ Կառլ Մյուլլերի, 1884 թ.:

Ստրաբոնը (մ.թ.ա.64–25 թթ.), որպես 17 հատորանոց «Աշխարհագրություն» աշխատության հեղինակ, համարվում է մեր ճանաչած աշխարհագրության հիմնադիրը: Այս հատորները ամենակարևոր աշխարհագրական գրություններն են, որոնք պարունակում են մանրակրկիտ տեղեկություններ դասական աշխարհի, երկրների և ժողովուրդների մասին:

Չնայած աշխատությունը կոչված է Աշխարհագրություն, սակայն աշխարհագրական տեղեկություններից բացի՝ հատորները հավելյալ պարունակում են նաև պատմական և ժողովրդագրական մանրամասներ: Հայաստանի և հայերի մասին նա նշում է կարևոր լեռները, գետերն ու լճերը, ինչպես նաև տալիս տեղեկություններ հայ ժողովրդի և նրա նախապատմության վերաբերյալ:

Ներքևում վերատպվածը Ստրաբոնի բացատրած տեղեկությունների հիման վրա պատրաստված քարտեզն է, որի վրա Հայաստանը ցույց է տրված Կասպից և Սև ծովերի միջև՝ դեպի հարավ ընկած տարածքում՝ Փոքր Ասիայից արևելք: Հատորի բացատրական տեքստի մեջ Հայաստանի հարևաններն են Իբերիա–Վիրքը, Ալբանիա–Աղվանքը և Մեդիա–Մարաստանը, որոնց ոչ բոլորի անուններն են տեղ գտել քարտեզում³:

Աշխարհագրության 11–րդ գրքի տարբեր գլուխներում Ստրաբոնը Հայաստանի և հայերի մասին գրում է ավելի քան 60 տեղում:



Քարտեզ 6. Ստրաբոնի բացատրած աշխարհը, վերագծող՝ Կառլ Մյուլլեր:

Մ.թ.ա. I դարում Հայաստանն ուներ հզոր արքա՝ Տիգրան Երկրորդը կամ Տիգրան Մեծը (մ.թ.ա. 140–55 թթ.), ով կառուցեց հսկայական հայկական մի թագավորություն՝ տարածված Կասպից ծովից մինչև Միջերկրականի արևելյան ափերը՝ Սիրիան: Քարտեզ 7-ում Տիգրանի թագավորությունը նշված է դեղինով: Ժամանակի երկրներից Տիգրան Մեծի Հայաստանը ներառում էր Մեդիան, Կադուսիան, Կապադովկիան, Սիրիան, Կոմմագենեն, Ադիաբենեն, Մելիտենեն, Կիլիկիան և այլ երկրներ:



Տիգրանի հզոր պետությունը Հռոմին ընդունելի չէր, և Հռոմի կայսրությունը, իր դաշնակիցների հետ միանալով, Տիգրանին պարտության մատնեցին և նրա կայսրությունը սահմանափակեցին միայն Մեծ Հայքի տարածքով:



Քարտեզ 7. Հայաստանը և Տիգրանի գրաված երկրները նրա հզորության գագաթնակետին:

Քարտեզը պատրաստել է Կառլ Մյուլլերը՝ վերցված 1875 թ. *Սմիթի Առլասից*:

Օսմանյան կայսրության 1900-ականներին հրատարակված դարոցական ատլասներից մեկում, որը գծել է օսմանցի հայտնի քարտեզագետ Իբրահիմ Հիլմին, առկա է Միջին Արևելքի՝ նախքան մեր թվարկության սկիզբը եղած իրավիճակի քարտեզը: Այստեղ հստակորեն նշված է Հայաստանը, որի անունը տեղադրված է մեր ճանաչած Մեծ Հայքի տարածքի վրա: Նրա հարևաններն են՝ հյուսիսում Իբերիա-Վիրքը, արևելքում՝ Ուրմիայի թագավորությունը (Փոքր Մարաստանը), հարավում՝ Ասորեստանն ու Միջագետքը և արևմուտքում՝ Կապադովկիան ու Պոնտոսը:



▲Քարտեզ 8. Հիլմիի Դասական աշխարհի քարտեզը, 1900-ական թթ.:

◀Քարտեզ 9. Օսմանյան քարտեզի հայերեն թարգմանությունը:

Ալեքսանդրիացի Կլավդիոս Պտղոմեոսը (մոտ 98–168 թթ.) ամենակարևոր հույն աշխարհագրագետն էր և ճանաչված է որպես քարտեզագրության հիմնադիր: Նա իր քարտեզագրության հիմքը հանդիսացող «Գեոգրաֆիա» աշխատության մեջ առաջադրել էր հիմունքներ ու մեթոդներ, որոնք գործածվեցին մինչև 16-րդ դարը: Գրքի հատորներում առկա է աշխարհի տեղանուններից շուրջ 8000 անուն պարունակող ցանկ, որտեղ ամեն մի երկրի տեղանունները ցուցակագրված են երկրին վերաբերող գլխում: Ընդհանուր տեղանուններից 164-ը պատկանում են Մեծ Հայքին և Փոքր Հայքին: Գրքի բնագիրը կորած էր, մինչև որ 15-րդ դարում հունարեն պատճենը հայտնաբերվեց Կոստանդնուպոլսում ու թարգմանվեց լատիներեն: Սակայն մեզ հասած քարտեզների հնագույն օրինակը 12-րդ դարի ընդօրինակում է: Պտղոմեոսի բացատրությունները և տեղանուններն իրենց աշխարհագրական կոորդինատներով այնպիսին էին, որ քարտեզագետներին հնարավորություն տվեցին դրանց հիման վրա կառուցելու նրա բացատրած բուն քարտեզները: Քարտեզների շարքին են մեկ աշխարհացույց և 27 երկրամասերի քարտեզներ՝ նվիրված Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում գոյություն ունեցող երկրներին:

Քարտեզ 10-ը Պտղոմեոսի Մեծ և Փոքր Հայքերի քարտեզն է, որտեղ դրանք նշված են սպիտակով՝ անվանված Armenia Maior և Armenia Minor: Իրանց շրջապատում են արևելքից Կասպից ծովը և Մարաստանը, հյուսիսից՝ Կապադովկիան, Կողքիս-Աբխազիան, Վիրքը և Ալբանիա-Ադվանքը, արևմուտքից՝ Պաֆլագոնիան և Գալաթեան, իսկ հարավից՝ Ասորեստանը և Սիրիան:

Գեոգրաֆիա հատորի բոլոր օրինակներում առկա են Մեծ Հայքն ու Փոքր Հայքը իրենց հարևան երկրների հետ միասին⁴:



Քարտեզ 10. Պտղոմեոսի Մեծ և Փոքր Հայքերի քարտեզը՝ վերագծված Հոմուս, 1482 թ.:

Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեություն քարոզեց Հայաստանում, որի համար բանտարկվեց Արարատի ստորոտի մոտ գտնվող Խոր Վիրապում: Սակայն Տրդատ թագավորին բռնաբերեց հետո թագավորն ու արքունիքը ընդունեցին քրիստոնեությունը, որը և 301 թ. դարձավ Հայաստանի պետական կրոնը:

Ըստ Աստվածաշնչի՝ վաղ քրիստոնեական շրջանը ցուցադրող որոշ քարտեզներում Մեծ Հայքի, Վանա լճի և Արարատի շրջակայքը նշվում է որպես Երկրային Դրախտ: Քարտեզ 11-ում Հայաստան անվան ներքևում նշված են Եղեմ և Դրախտ անունները: Նշված են նաև Նոյ Նահապետի որդիների՝ Սեմի, Քամի և Հաբեթի ուղիները դեպի տարբեր երկրներ: Իսկ բուն քարտեզը կոչված է Սրբերի պատմությունը նշող ընդհանուր քարտեզ՝ պատրաստված ֆրանսիացի քարտեզագետ Ֆիլիպ Բաուշի ձեռքով Փարիզում 1783 թ.:



Քարտեզ 11. Բաուշի Սրբերի պատմության քարտեզը, Փարիզ, 1783 թ.:


Հինգերորդ դարի հոռմեացի փիլիսոփա և գրող Ամբրոջիոս Թեոդոսիոս Մակրոբիոսը (ծաղկել է 398–423 թթ.), որը գնդաձև երկրի և դրա եղանակային գոտիների բաժանված լինելու տեսության հետևորդներից էր, հայտնի է իր «Սատուռնալիա» աշխատանքով: Այս ձեռագիրը պարփակում է նրա «Սկիպիոնի երազի լուսաբանումն ըստ Կիկերոնի» (կամ ավելի համառոտ՝ «Սկիպիոնի երազը») երկը: Մակրոբիոսի գրվածքների հիմքում դրված են հունահռոմեական շրջանի աշխատանքները, որոնք նույնպես լուսաբանում էին եղանակային գոտիների բաժանումը:

Սկիպիոն Ավազը (մ.թ.ա. 235–183 թթ., ճանաչված որպես Աֆրիկացի) և նրա թոռը՝ նույն անունը կրող Սկիպիոն Կրտսերը (մ.թ.ա. 185–129 թթ.), հոռմեացի զինվորականներ ու դիվանագետներ էին, որոնք երկուսն էլ պատերազմել էին Կարթագենի դեմ: Սկիպիոն Կրտսերի տեսած երազում մեծ հայրը՝ Սկիպիոն Ավազը, նրան բարձրացնում տանում է երկինք ու այնտեղից երկրագնդին դիտելով՝ բացատրում.

Տես, տարբեր եղանակների գոտիները շերտավորում են երկրագունդը: Սրանցից երկու միմյանցից ամենահեռուներին, որոնք երկրագնդի հակառակ բևեռներում են, տրվել է սառնամանիք և ցուրտ եղանակ, մինչդեռ կենտրոնական գոտին կիզված է Արեգակի տաքից: Այս բևեռային և կենտրոնական գոտիների միջև երկու գոտիներն են լոկ, որոնք բնակելի են⁵...

Սա Մակրոբիոսին բնորոշ՝ 1528 թվականին հրատարակված մի տպագիր քարտեզ է, որտեղ երկրագունդը բաժանված է հինգ եղանակային գոտիների: Քարտեզն ուղղորդված է հյուսիսով վեր, որտեղ «Հյուսիսային սառուցյալ գոտին» է: Դրա ներքևում «Հյուսիսային բարեխառն գոտին» է, որը ներկայացնում է բնակելի աշխարհի ամբողջական տարածքը: Քարտեզում արևելքի և արևմուտքի տեղերը հակառակ են նշված: Բարեխառն գոտում առկա են Բրիտանիան, Իսպանիան, Գալլիան, Իսլանդիան, Եթովպիան, Հայաստանը, Պարթևստանը և Հնդկաստանը:


Այս գոտուց հարավ «Հարավային բարեխառն գոտին» է, որն իբր բնակեցված է մեզ անծանոթ «Անտիպոդներով» կամ «հակոտնյաներով»:



Քարտեզ 12. Մակրոբիոսի աշխարհագրույցներից մեկը՝ հինգ եղանակային գոտիներով, 1528 թ.:

405 թ. Մերոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, որը հնարավորություն տվեց հունարեն, արամեերեն, ասորերեն, արաբերեն լեզուներից դասական կարևոր գրականությունն ու Աստվածաշունչը թարգմանել հայերեն: Այս դարաշրջանն էր, որ կոչվեց հայ գրականության ոսկեդարը:


451 թ. Հայ եկեղեցին կրոնական դավանանքի և այլ պատճառներով բաժանվեց մյուս եկեղեցիներից: Մեկ ուրիշ պատճառ էլ կարող էր լինել այն, որ Սասանյան Պարսկաստանը սկսել էր Հայաստանում քրիստոնեությունը վերացնելու իր ծրագիրն ու արշավանքները: Նույն տարում պարսիկները կրոնական բնույթ ունեցող Ավարայրի ճակատամարտի ընթացքում հաղթանակ տարան, բայց պարտությունը հայ ժողովրդին ավելի քաջալերեց պահպանելու իրենց նոր կրոնը, և ի վերջո պարսիկները որոշեցին հայերին ընդունել որպես մի քրիստոնյա ժողովուրդ: Քարտեզ 13-ը ցույց է տալիս Հայաստանի սահմանները 4-րդ դարի վերջերին, որի շրջապատող երկրներն էին Աբխազիան, Վիրքը, Աղվանքը, Մարաստանը, Ասորեստանը, Միջագետքը և Փոքր Ասիայի Փոքր Հայքը:



Քարտեզ 13. Մեծ Հայքի սահմանները Արշակունիների թագավորության ժամանակ, 4-րդ դ.:

Հայերեն հնագույն աշխարհագրական երկը «Աշխարհացույցն» է: Որոշ մասնագետներ սա վերագրում են Մովսես Խորենացուն, սակայն այլոց և հեղինակի հետազոտությունները ցույց են տալիս, որ այստեղ հղումներ կան վեցերորդ դարի Կողմա Աղեքսանդրացու տեքստերին, այդ իսկ պատճառով ավելի հավանական է, որ գրքի հեղինակը լինի Շիրակացին⁶ կամ ուրիշ մեկը: Գիրքը շատ բանով նմանվում է Պապուա Աղեքսանդրացու աշխատանքներին, սակայն Հայաստանի և հարակից երկրների վերաբերյալ պարունակում է ավելի մեծ քանակով տեղեկություններ: Գրքում առկա է նաև մղոնաչափ, որը ցուցակագրում է տարածաշրջանի քաղաքների հեռավորությունները, սակայն մեզ հասած պատճեններում որևէ քարտեզ, եթե նույնիսկ ժամանակին գոյություն ունեցել է, առկա չէ:

Իսահակ Նյոտոնի ժամանակակից և ընկեր, աստվածաբան Ուիլյամ Ուինսթոնը (1667–1752 թթ.), իր եղբոր՝ Զորջի հետ Խորենացու «Հայոց պատմությունը» և «Աշխարհացույցը» թարգմանել են լատիներեն և 1736 թ. հրատարակել Լոնդոնում: Այս երևույթը վկայում է, որ ժամանակին, նույնիսկ երբ Հայաստանն անկախ երկիր չէր, Եվրոպայում նրանով հետաքրքրվողներ կային:



Հատորը նաև պարունակում է Մեծ Հայքի քարտեզը՝ ըստ Աշխարհացույցում եղած տեղեկությունների, որտեղ ցուցադրված են Մեծ Հայքի 15 աշխարհները (տես քարտեզ 14):

Քարտեզում Հայաստանի հարևաններն են Մարաստան-Ատրպատականը կամ Պարսկական Աղբեջանը, Միջագետքը, Կողքիս-Աբխազիան, Վիրքը և Ալբանիա-Աղվանքը, նույնը, ինչ տեսնում ենք Պողոմեսուի Մեծ Հայքի քարտեզներում (տես քարտեզ 10):


Քարտեզ 14. Մեծ Հայքի քարտեզը Ուինսթոնների թարգմանած Աշխարհացույցի հատորից, 1736 թ.: Այս հատորում որպես գրքի հեղինակ նշված է Մովսես Խորենացու անունը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Վաղ միջնադարում Եվրոպան աստիճանաբար դառնում էր քրիստոնյա, և եվրոպական գիտությունն ու գրականությունը սկսեցին պարտադիր ենթարկվել եկեղեցու թեոլոգիաներին ու քարոզչությանը: Հին հունական աշխարհի գնդաձև տեսությունը մերժվեց՝ տեղ տալով աշխարհի տափարակ և սկավառակաձև լինելու տեսությանը, որը շրջապատված է դառը ջրերով՝ իր կենտրոնում ունենալով Երոսադեմը: Դրանց վրա հաճախ ցույց էր տրվում Արարատը՝ վրան նստած Նոյյան տապանով, տեղադրված Հայաստանի շրջանում:

Քարտեզ 15-ը քրիստոնեական աշխարհացույցի տարածված օրինակներից է, որտեղ սկավառակի տեսք ունեցող աշխարհի հարավային կեսը բնակելի չէ: Քարտեզը, ուղղորդված լինելով արևելքով վեր, բնակելի տարածքը ջրային տարածքներով բաժանված է երեք մայրցամաքի: Վերի մասը՝ արևելքում՝ Ասիան է, ներքևի ձախ կողմը Եվրոպան է՝ Ասիայից բաժանված Դոն-Տանայիս կոչված գետով, իսկ աջում՝ Աֆրիկան՝ Ասիայից բաժանված Նեղոս գետով: Կենտրոնում խաչով նշված է Երոսադեմը, որից ներքև արևմուտք իջնող զուգահեռ գծերը ներկայացնում են Միջերկրական ծովը: Ասիայի աջ կողմում ցույց են տրված Նոյյան տապանը և Հայաստանը՝ ընդգծված կապույտով:

Ասիայի տարածքում նշված է Փոքր Ասիան, Կոստանդնուպոլիսը, Կիլիկիան, Կեսարիան, Նազարեթը, Հորդանան և Եփրատ գետերը, Միջագետքը, Բաբելոնը, Քաղղեան և Գալիլեան: Վերը նշված ջրային տարածքները T տառի տեսքն ունեն, շրջապատված O-ի տեսք ունեցող օվկիանոսով, որի պատճառով այս տեսակի քարտեզներին տրվում է «T-O քարտեզ» անվանումը: Հայերենում սրանք երբեմն նաև կոչվում են «Սաղմոսային» քարտեզներ:




5-րդ և 6-րդ դարերի ընթացքում Հայաստանը դարձավ Բյուզանդական և Սասանյան կայսրությունների ռազմադաշտը: Այդ դարերում Հայաստանի տարածքը բաժանվեց երկու մասի. բյուզանդական մասը ճանաչվեց Փոքր Հայք, իսկ երկրի մեծ մասը, որը Մեծ Հայքն էր, մնաց պարսկական լծի տակ:

Քարտեզ 15. 7-րդ դարի Բեդա Երանելու Աշխարհացույց քարտեզը, որտեղ վերին կեսն Ասիան է՝ Հայաստանով և Նոյյան տապանով:

Բյուզանդիայի Հուստինիանոս առաջին կայսրը գահ բարձրացավ 527 թ.՝ իր հետ բերելով Հռոմեական կայսրությունը վերականգնելու երևակայական մի հեռանկար: Իր երկու՝ Բելիսարիոս և հայազգի Ներսես զորավարների օգնությամբ նա գրավեց Իտալիայի, Աֆրիկայի և Իսպանիայի որոշ մասեր, ինչպես նաև Փոքր Հայքը: Հուստինիանոսն իր վերահսկողությունը դյուրացնելու նպատակով Փոքր Հայքը բաժանել էր երեք մասի՝ նրանց կոչելով Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայք անուններով, որոնք ցույց են տրված քարտեզ 16-ի ձախ կողմում: Այստեղ պարսկական գերիշխանության տակ եղած Հայաստանի տարածքն անվանված է Մեծ Հայք, որի հյուսիսային սահմանն է Կուր գետը:

Երբ 428 թ. Սասանյանները գրավեցին Հայաստանի հյուսիսային շրջանը, Վիրքը և Աղվանքը, նրանք էլ այս տարածաշրջանի կառավարումը դյուրացնելու նպատակով Աղվանքի հարավային սահմանը, որը նախկինում Կուր գետն էր, իջեցրին՝ հասցնելով հարավ՝ մինչև Արաքս գետը (տե՛ս քարտեզ 20)՝ այսպիսով մինչ այդ հայկական համարվող շրջանները կցելով Աղվանքին: Այս պատճառով է, որ Ադրբեջանի Հանրապետության պատմաբաններն Աղվանքը տեղադրում են հյուսիսում Դերբենդից մինչև հարավում պարսկական Ատրպատական նահանգը՝ շարունակելով ընդհուպ մինչև Համազանի շրջանը:



Քարտեզ 16. Հայաստանն ըստ Հուստինիանոսի (536 թ.)՝ բաժանված Բյուզանդական և Պարսկական կայսրությունների միջև: Հեղինակ՝ Ֆիլիպ դե լա Ռյու, 1659 թ.:


Քարտեզ 17-ը քրիստոնեական T-O տեսակի աշխարհացույց է, որի վերը նշում է արևելքը՝ Երկրային դրախտով, որտեղ կանգնած են Ադամն ու Եվան: Հայաստան անունը գրված, սակայն կիսով չափ ջնջված է՝ տեղագրված դրախտից ձախ՝ կանաչ Կովկասյան լեռների մոտ: Այստեղ նշված երկրներից ու քաղաքներից են Կապադովկիան, Պամփիլիան, Փոյուզիան, Քաղկեդոնը և այլն: Աշխարհը բաժանված է երեք մասի: Ուղղահայաց կապույտ գիծը Միջերկրականն է իր կղզիներով, որը Եվրոպան բաժանում է Աֆրիկայից, ձախ կողմի հորիզոնական կապույտը Դոն գետն է՝ Ասիայի և Եվրոպայի սահմանը, իսկ աջ կողմում կապույտը Նեղոսն է՝ Ասիայի և Աֆրիկայի սահմանը: Աջում կարմիր գծով առանձնացած քարտեզի փոքր մասը նշում է աշխարհի տափարակ սկավառակի հարավային՝ անմարդաբնակ տարածքը:

591 թ. Բյուզանդիոնի Մորիկ կայսրը և ապա հայազգի Հերակլետոսը կարողացան պարսիկներին Փոքր Ասիայից քշել, սակայն 645 թ. Արաբական խալիֆայությունը Սասանյաններից գրավեց Պարսկաստանը և ներխուժեց Հայաստան: Դրանից մեկուկես դար անց Անիում իշխող Բագրատունիները ճանաչվեցին որպես անկախ իշխաններ և, Վասպուրականի Արծրունիների հետ սերտ կապեր հաստատելով, մեկ դարից ավելի հայ ժողովրդին խաղաղություն պարգևեցին՝ առիթ տալով բարգավաճելու, զարգանալու և զբաղվելու ստեղծագործական աշխատանքներով:

989-1001 թթ. Բագրատունիները Անիում կառուցեցին հանրահայտ Մայր տաճարը և բազմաթիվ այլ գեղատեսիլ եկեղեցիներ: Իսկ այդ ընթացքում նրանցից հարավ գտնվող Արծրունիները Վասպուրականում, Վանա լճի Աղթամար կղզում կառուցեցին աննման Ս. Խաչ եկեղեցին՝ իր հրաշալի որմնաքանդակներով ու պատկերներով, որն այսօր համարվում է արևելյան ճարտարապետության գլուխգործոցներից մեկը:



Քարտեզ 17. Լիբանա Բեատոս վանականի *Աշխարհացույցը* նրա Ապոկալիպսիս աշխատությունից, 8-րդ դար:



Քարտեզ 18. 11-րդ դարի T-O տեսակի գերմանական քարտեզ՝ ըստ Իսիդոր Եպիսկոպոսի շարադրանքների Կենտրոնում Երուսաղեմն է, իսկ Կարմիր ծովը ներկված է կարմիր և նույնիսկ նշվում է ծովի ձեռքվելը, որտեղից հրեաները Եգիպտոսից վերադարձան Պաղեստին: Քարտեզում շրջանի մեջ են առնված Հայաստանը, Արարատները՝ իրենց զույգ զագաթներով, և Նոյյան տապանը՝ տեղադրված Կովկասյան լեռներից հարավ: Քարտեզը պահպանվում է Մյունխենի պետական գրադարանում:

Բագրատունիների իշխանության օրոք սելջուկները ներխուժեցին Պարսկաստան և, 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիներին հաղթելով, տիրեցին Հայաստանին և Փոքր Ասիայի մեծ մասին: Նրանք կործանեցին Անին, որի շրջանի բնակչության մեծ մասը փախավ Սև ծովի հյուսիսային ափերը՝ հիմք դնելով Ղրիմի, Ռուսստանի, Ուկրաինայի, ապա նաև Լեհաստանի ու Հունգարիայի հայ համայնքներին: Նրանց մի մասն էլ, անցնելով հարավ, հիմնադրեց Կիլիկիայի Հայկական թագավորությունը:

Արաբ խալիֆաների շրջանում իսլամական աշխարհը քաջալերում էր գիտության, բժշկության և արվեստի զարգացումը: Այդ ոլորտների մասնագետների մեծամասնությունը պարսիկներ էին. նրանք բոլորը գրում էին իսլամի համար ընդհանրական գիր համարվող արաբերենով: Թարգմանելով և զարգացնելով հունա-հռոմեական մշակույթն ու գիտությունը՝ նրանք 10-12-րդ դարերում թվաբանության, աշխարհագրության և բժշկության մեջ հսկայական առաջընթաց ունեցան ու հասան իրենց գագաթնակետին: Աշխարհագրության բնագավառում նրանց առաջադիմությունները նկատելի են հաջորդ քարտեզներում, որոնցից երևում է, որ նրանք աշխարհը համարում էին գնդաձև՝ իրենց քարտեզներում հատուկ տեղ տալով տարածաշրջանի միակ քրիստոնյա երկրին՝ Հայաստանին:


Պարսիկ աշխարհագրագետ Իսթախրիի աշխարհացույց քարտեզում (քարտեզ 19), որի վերը հարավն է, աջ կողմում կապույտ ծովը Միջերկրականն է, իսկ ձախ կողմում՝ Հնդկական օվկիանոսը՝ իր մի քանի կղզիներով: Աջում՝ Միջերկրականի հարավում՝ վերը, պատկերված են Նեղոսի հինգ ակունքները, որոնք հոսում են դեպի հյուսիս՝ Միջերկրական ծով, որի մյուս ափին Էգեյան ծովը ձգվում հասնում է Սև ծովի բոլորակին: Սրա հարավ-արևելքում էլ տեղադրված է Հայաստանը՝ նշված կարմիր սլաքով, իսկ Հայաստանից հարավ՝ վերին հատվածում, նշված է պարսկական Ատրպատական-Աղբրեջան նահանգը:

Քարտեզ 19. Իսթախրիի Աշխարհացույցը՝ նրա «Մասալիք վա Մամալիք» գրքից: Աշխարհը շրջապատված է չորս տարրերով՝ ջուր, կրակ, օդ և հող, որոնցից, ըստ հունական դասական գիտության, կազմված է ամեն ինչ: Հարավը քարտեզի վերևի կողմում է:



Քարտեզ 20-ը Կովկասից հարավ շրջանն է 10-րդ դարի իսլամական մի քարտեզում: Սա Բալխի դպրոցի քարտեզ է, որոնք սովորաբար պատկերում են միայն մահմեդական երկրների քարտեզները: Սակայն նրանց մեջ՝ Կովկասից հարավ երկրների քարտեզում, բացառապես ցույց է տրվում նաև քրիստոնյա Հայաստանը, քանի որ նրանց ասելով՝ հայերը սերտ առևտրական և քաղաքական կապեր ունեին Իրանի և մուսուլմանական այլ երկրների հետ:

Քարտեզում կանաչ կիսակլորները նշում են լեռնաշղթաները, իսկ կապույտը՝ գետերը: Կասպից ծովը գունավորված է կանաչ: Երկու կարմիր լեռները զույգ Արարատներն են, իսկ մյուսը՝ Ատրպատականի Սաբալան լեռը: Փոքր քառանկյունները նշում են քաղաքները՝ իրար միացած ճանապարհներով: Արան-Աղվան, Արմանիյե-Հայաստան, Ադրբեջան-Ատրպատական երկրները նշված են մեծ տառերով: Քարտեզ 21-ը այս քարտեզի տեղանունների հայերեն թարգմանությունն է:



Իսլամական Բալխի դպրոցի այս քարտեզը և դրա տարբերակներն ու օրինակները կարելի է գտնել իսլամական քարտեզագրության և աշխարհագրության բոլոր երկերում 9-րդ դարից ընդհուպ մինչև 14-15-րդ դարերը, այսինքն՝ Արաբական խալիֆայության շրջանի մեծ մասում: Փաստ, որը վկայում է Հայաստանի կարևոր դերը տարածաշրջանի երկրների անտեսության և մշակույթի մեջ:

Հաջորդ էջի քարտեզ 21-ում տրված են այս քարտեզի տեղանունների թարգմանությունները:

Քարտեզ 20. Իբն Հաուբալի 10-րդ դ. Հարավային Հայաստանի, Ատրպատականի և Առանի քարտեզը, մոտ 950 թ., Ստամբուլի Թոփկափու թանգարան:




Քարտեզ 20/21-ի քարտեզներում Արաքսը և Կուրը՝ երկուսն էլ առանձին հոսում են Կասպից ծով:

Աղվանքը, ինչպես նշվեց քարտեզ 16-ի բացատրություններում, տեղադրված է Արաքսից հյուսիս, իսկ դրա հարավում են Հայաստանն ու պարսկական Ատրպատական-Աղրբեջան նահանգը:

Քարտեզի բացատրական տեքստում Հայաստանի քաղաքներից նշված են Սալմաստը, Խոյը, Բերկրին, Արճեշը, Բիթլիսը, Ամիդն ու Դվինը՝ փաստելով Հայաստանի կարևորությունը Կովկասի հարավում:

Քարտեզ 21. Քարտեզ 20-ի տեղանունների թարգմանությունը:



Քարտեզ 22. Իդրիսիի Ռոմեի գրքից Կովկասի հարավի քարտեզը՝ 1154 թ. թարգմանություններով:

Արաբ աշխարհագրագետ ալ-Իդրիսին (1099–1166 թթ.) իր պատրաստած «Ռոմեի գրքում» ունի մեկ աշխարհացույց քարտեզ և 70 մանրակրկիտ քարտեզներ, որոնք պատկերում են աշխարհի 7 եղանակային գոտիները: Սրանք բոլորն ուղղորդված են հարավով վերև: Ձեռագրի օրինակը պահպանվում է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում: Սրանցից Կովկասի հարավային շրջանը պատկերված է քարտեզ 22-ի վերատպված քարտեզում:


Քարտեզում Արաքսից հարավ նա նշում է Իրանի Աղբբեջան նահանգը, իսկ նրա արևմուտքում՝ Հայաստանը, Վանա լիճը և մի քանի քաղաք: Հայաստան անունը նշված է նաև Արաքսից հյուսիս՝ Նախիջևանի և Դվինի վրա, իսկ Շիրվանը, Շամախին, Դերբենդը և Շամխորը նշված են որպես քաղաքներ, որոնք Արաքսից հյուսիս տարածքում ապագայում հիմնված իսլամական խանություններ դարձան: Շրջանից բացակայում են Աղվանք և Աղբբեջան անվանումները, քանի որ Աղվանքն արդեն գոյություն չուներ, իսկ Արաքսի հյուսիսային ափերին երբևէ Աղբբեջան անունով երկիր չէր եղել:

Անիի կործանումից և հայկական այլ բնակավայրերը գրավվելուց հետո հայ տարագիրների մեկ մասն, անցնելով հարավ, հասավ Կիլիկիայի շրջան, որտեղ 1180 թ. հիմնադրվեցին հայ իշխանապետություններ, որոնք կազմակերպվելով 1198 թ. հիմնեցին Կիլիկիայի հայկական թագավորությունը: Հայկական Կիլիկիայում իշխում էին Ռուբինյանները, Հեթումյանները և ապա Լուսինյանները: Երկու դարից ավելի տևած ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորներն ու առևտրականները սերտ կա-

պեր ստեղծեցին Վենետիկի, Ջենովայի և այլ եվրոպական կենտրոնների հետ՝ հաճախ նրանցից ստանալով առևտրական մենաշնորհներ:

Կիլիկիայի Սիս քաղաքում տեղ գտավ տարագրված հայոց Կաթողիկոսարանը, որի ուժերով ստեղծվեցին բազմաթիվ կրթօջախներ, կրոնական դպրոցների կենտրոններ ու արվեստի դպրոցներ, ներառյալ մանրանկարչության կենտրոններ, որտեղ վարպետ մանրանկարիչները, ինչպիսիք էին Թորոս Ռոսլինը, Սարգիս և Գրիգոր Պիժակները և ուրիշներ, ովքեր ստեղծեցին հայ մանրանկարչության գլուխգործոցներից շատերը:


Կիլիկյան թագավորության ծաղկուն շրջանը համընկավ խաչակիրների արշավանքներին, որոնց Նրուազեմ արշավող բանակի համար նրա քաղաքները բարեկամական հակում ունեցող ապաստարաններ էին: Պետք է նշել, որ ոչ բոլոր խաչակիրներն էին իրենց որպես հավատացյալ քրիստոնյա պահում, քանի որ նրանցից շատերը շտապում էին հասնել Նրուազեմ՝ բաժին ձեռք բերելու քաղաքի հարուստ ավարից: Կիլիկիայի Հայկական թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց 1375 թ. մամլուքների գրավումով:



Քարտեզ 23. Կիլիկիայի հայկական թագավորությունը:

Քարտեզ 24-ի T-O տեսակի աշխարհագրույցը պատրաստվել է Ֆրանսիայում և ունի այս տեսակի քարտեզների յուրահատուկ կառուցվածքը: Երջանաձև աշխարհը Նեղոսի, Դոնի և Միջերկրականի ջրային տարածքներով բաժանված է երեք մասի (տե՛ս քարտեզ 17-ի բացատրությունները): Դրանք են Ասիան, Եվրոպան և Աֆրիկան՝ կենտրոնում ունենալով Երուսաղեմը: Արևելքը վերն է, ուր առկա է նաև Երկրային Դրախտը:

Ֆրանսիացիները սերտ կապեր ունեին Կիլիկիայի հայ թագավորների հետ և հավանաբար այդ պատճառով էլ այս քարտեզի վրա պատկերի վերևի կեսը գրավող Ասիայի տարածքում առկա են երկու տարբեր Հայաստաններ: Մեկը Միջագետքից հյուսիս է, որը Մեծ Հայքն է, իսկ մյուսը Կիլիկիայի Հայկական թագավորությունն է, որը Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում է: Սրանք երկուսն էլ ընդգծված են կապույտով: Ասիայում առկա են հիսունից ավելի տեղանուններ, Եվրոպայում՝ ավելի քան 20, իսկ Աֆրիկայում ընդհանրապես տեղանուն չի նշված, քանի որ ժամանակին այդ մայրցամաքը բավարար հետազոտված չէր:



Քարտեզ 24. Իսիդորի Աշխարհագրույցի ֆրանսերեն տարբերակը, 12-րդ դար, Էքս-ան-Պրովանս, Մեծանի գրադարան:

13–16–րդ դարերի ժամանակաշրջանին են պատկանում ծովագնացների քարտեզները, որոնք օգնում էին Միջերկրական ծովում նավարկելուն: Այս ծովային քարտեզները կոչվում են պորտոլաններ: Սրանցից շատերում Կիլիկիայի շրջանն առնված է կանաչ կամարի տակ, որը նշում է այդ շրջանի քրիստոնյա և բարեկամ լինելու պարագան:

Քանի որ պորտոլանները ծովագնացներին ծառայելու նպատակով էին պատրաստվում, ապա դրանց վրա՝ ծովափերից հեռու ցամաքային հատվածում, ընդհանրապես ոչ մի տեղանուն չէր նշվում: Սակայն հավանաբար Հայաստանի և հայերի կարևորությունը նշելու համար պորտոլաններից շատերում տեսնում ենք Արարատները՝ դրանց վրա նստած Նոյյան տապանով, ինչպես նաև Հայկական բարձավանդակից ակունք առնող Արաքս, Եփրատ և Տիգրիս գետերը, Մեծ Հայքը և նրա մի քանի քաղաքների անուններ: Այս ցուցադրումը կարելի է տեսնել քարտեզ 25–ում՝ վերին աջ անկյունում:

Ներքևում ներկայացվածը Դուսերտի 1339 թ. պորտոլան քարտեզից Միջերկրականի և Հայաստանի շրջանն է: Ներքևի ձախ կողմում՝ կանաչ կամարի տակ, նշված է Կիլիկիայի հայկական թագավորության տարածքը՝ պատկերված երկու հայկական թագավորական և դրոշներով, և տեղանուններով, որոնց վրա առկա է Փոքր Հայք անունը:

Կիլիկիայից հյուսիս–արևելք՝ Սև ծովի աջ ծայրամասում, ներկա են սև գունավորված լեռներ, որոնք նշում են Հայկական լեռնաշխարհը, որտեղից ակունք են առնում ձախից Եփրատ և աջից՝ Տիգրիս գետերը: Դրանցից աջ պատկերված են Արարատները՝ իրենց գագաթներին նստած Նոյյան տապանով՝ գծագրված կողքի վրա: Լեռան վերևի գրությունն է Մեծ Հայք, իսկ տապանի մոտինը՝ Նոյի տապանը, որը Հայաստանում նստեց Արարատների վրա:

Կիլիկիայի հայկական թագավորությունը 1375 թ. վերացրեցին այդտեղ ներխուժած մամլուքները, և Կիլիկիայի վերջին՝ Լևոն 6–րդ թագավորը ապաստանեց Ֆրանսիայում, որտեղ և մահացավ:

Քարտեզ 25. Հատված Դուսերտի 1339 թ. պորտոլանից: Հայաստանի և Կիլիկիայի հայկական թագավորության առկայությունը նշում է դրանց կարևոր դերը եվրոպական երկրների առևտրական և քաղաքական կյանքում: Պահվում է Փարիզի Ֆրանսիայի ազգային գրադարանում:



12–14-րդ դարերում հայ վանականների մի քանի խումբ այցելել են Գերմանիա, Հոլանդիա, Ֆրանսիա և Բրիտանիա՝ բերելով իրենց հայրենիքի մասին աշխարհագրական, ավանդական ու կրոնական տեղեկություններ: Սրանցից մի քանի խմբի մասին գրել է Լոնդոնից հյուսիս տեղակայված Ս. Ալբան քաղաքի տաճարի անգլիացի պատմիչ Մաթթյու Փարիզեցին (1200–1259 թթ.), որն իր «Պոլիբրոնիկոն» աշխատության մեջ գրում է 1252 թ. այցի մասին.

Այս ժամանակ մեզ Ս. Ալբան այցի եկան մի քանի հայ վանականներ... Նրանց մագաղաթյա դեմքերն՝ իրենց երկար մորուսներով, վկաներն էին իրենց անպաճույճ ապրելակերպի՝ հաստատելով նրանց սրբությունն ու խստաբարո կարգապահությունը⁷:

Նա նույնիսկ պատրաստել է Ավետյաց երկրի քարտեզը, որը հասնում է Երուսաղեմից մինչև Հայաստան և Արարատ: Քարտեզի վերին մասում երկու Արարատների իջած Նոյան տապանի մոտ գրված տեքստի բացատրությունների մի հատվածն ասում է.

Դեպի այս շրջանը, այսինքն՝ դեպի հյուսիս՝ Երուսաղեմից քսան օրվա հեռավորության վրա է Հայաստանը, բրիտոնյա մի երկիր, որտեղ ջրհեղեղից հետո իջավ Նոյյան տապանը և դեռևս հանգչում է այստեղի անայի և անձեռնմխելի լեռան վրա: Անապատների և վայրի կենդանիների առկայության պատճառով ոչ ոք չի կարող մտնել այս տապանին, և հանրահայտ է, որ այս երկիրը տարածվում է այրտեղից մինչև Հնդկաստան⁸:



Քարտեզ 26. Մաթթյու Փարիզեցու Ավետյաց երկրի քարտեզը Մեծ ժամանակագրություն աշխատությունից, 1252 թ.:

12–15-րդ դարերում կորցնելով իր անկախությունը՝ Հայաստանն ընկավ սելջուկ թուրքերի, մոնղոլների, Աղ-կոյունլու և Կարա-կոյունլու և թուրքական այլ ցեղախմբերի իշխանության տակ: Այս ժամանակաշրջանում Հայաստանի տարածքը տարբեր կերպ բաժանում և մասնատում էին օտար իշխանությունները: Չնայած այս բոլոր խնդիրներին՝ իսլամական և եվրոպական աշխարհացույց կամ շրջանը պատկերող քարտեզներում «Հայաստան-Էրմենիյե» անվանումը մշտապես նշվում էր: Սրա բուն պատճառն այն էր, որ չնայած անկախ պետականության բացակայությանը՝ տարածաշրջանը, հիմնականում բնակեցված լինելով հայերով, համարվում էր Հայաստան:

Այսպիսով՝ միջին դարերի Եվրոպայի կարևորագույն քարտեզներում, որոնց շարքին են պատկանում իտալական՝ Վերչելլիի (1191–1218 թթ.), գերմանական՝ Էբսթորֆյան (շուրջ 1232 թ.), բրիտանական՝ Հերեֆորդի (շուրջ 1290 թ.), իտալական՝ Բորջիայի (1410–1458 թթ.), Լեարդոյի (1452 թ.) և Ֆլորենցիայի Ֆրա Մաուրոյի (1460 թ.) Աշխարհացույց քարտեզները, մշտապես հիշատակվում է Հայաստանը՝ Նոյյան տապանով և Արարատներով:

Քարտեզ 27-ը գերմանական Էբսթորֆյան քարտեզից մի հատված է: Դրա բնագիրը ոչնչացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ ամերիկյան օդանավերը ուժեղացրին Հանովեր քաղաքում պահպանվող քարտեզի պահպանումը: Քարտեզում գրառված ակնառու տեղեկություններից են հետևյալները.



Աշխարհի կենտրոնում Երուսաղեմ քաղաքն է՝ շրջապատված ոսկեգույն պարիսպներով, որը տեսանելի է քարտեզի ներքևի աջ անկյունում: Իրականում սա քարտեզի կենտրոնն է:

Կիսալուսնի նման պատկերված նավակը Նոյյան տապանն է՝ նստած Արարատի զույգ գագաթներին, որը քարտեզի կենտրոնից ձախ կողմում է: Անվանված են Արարատն ու Նոյյան տապանը և պատկերված է աղավախ՝ ձիթենու ճյուղով: Տապանի ձախ կողքին է Ս. Բարդուղիմեոս Ավետարանչի դամբարանը:

Տապանից վեր՝ ոսկեգույն լեռների՝ Կովկասյան լեռնաշղթայի կողքին, կարմիր պարիսպներով նշված է «Հայաստան» անունը՝ ընդգծված կապույտով⁹:

Քարտեզ 27. Էբսթորֆյան աշխարհացույցի հյուսիսարևելյան մասը, 1232 թ.:
Քարտեզի վերնամասն արևելքն է, իսկ ներքևի աջ անկյունում՝ ոսկյա շրջանակի մեջ՝ Երուսաղեմը:

1460 թ. գծված այս պորտոլան քարտեզը վերջիններից է, որը պատրաստվել է Ամերիկայի հայտնաբերումից առաջ: Քարտեզագիրն է Վենետիկի վանական Ֆրա Մաուրոն, իսկ քարտեզը պատրաստվել է Պորտուգալիայի Ալֆոնս 5-րդ թագավորի պատվերով:

Քարտեզի հարավը վերն է, որի կենտրոնում տեսանելի են Կասպից և Սև ծովերը: Ինչպես նշվել է, Հայաստանը նույնիսկ անկախությունը կորցնելուց հետո ցույց է տրվում իսլամական և եվրոպական քարտեզներում, կամ, ավելի ճշգրիտ լինելու համար, հայերով բնակեցված Մեծ Հայքի տարածքը աշխարհագրական տեսանկյունից նշվում է որպես Հայաստան:



Քարտեզ 28. Ֆրա Մաուրոյի 1460 թ. աշխարհացույց քարտեզը: Քարտեզի տրամագիծը մոտ 2 մետր է:

Քարտեզ 29-ը Ֆրա Մաուրոյի աշխարհացույցի կենտրոնական հատվածն է, որտեղ կարելի է տեսնել Կովկասը և դրա հարավային շրջանը: Քարտեզի կենտրոնում՝ Կասպից և Սև ծովերի միջև ու նրանցից հարավ, «Հայաստան» անունը նշված է հինգ անգամ. առաջինը՝ որպես Մեծ Հայք, ապա՝ Փոքր Հայք, Հայաստան (2 տեղ) և վերջապես՝ Միջերկրականի ափին՝ Կիլիկիայի հայկական թագավորության տարածքում: Ներքևի քարտեզում այս Հայաստանի անվանումներն ընդգծված են կարմիրով: Նույն տեղում կապույտով ընդգծված են «Արարատները» և Նույն տապանը, իսկ կանաչով ընդգծված են «Ղարաբաղի լեռները»: Առաջին անգամ այս քարտեզում է, որ հիշատակվում է Ղարաբաղ անվանումը:

Հայաստանի մի քանի անգամ նշելը ցույց է տալիս, որ Եվրոպայի կրթված և առևտրական շրջանակներում Հայաստանը ճանաչված և հավանաբար, կարևոր մի երկիր էր, քանի որ նրա հարևաններից այստեղ միայն մեկ անգամ երևում են Վրաստան և Աբխազիա անվանումները՝ տեղադրված Սև ծովի ափերին, մեկ անգամ էլ Շիրվանը՝ Կասպից ծովի արևմտյան ափերին:



Քարտեզ 29. Ֆրա Մաուրոյի քարտեզի կենտրոնական հատվածը:

Միջնադարյան մեկ այլ կարևոր քարտեզագիրներից է հոլանդացի Աբրահամ Օրտելիուսը: Նա իր 1595 թ. Աշխարհացույց քարտեզում (տես քարտեզներ 30 և 31) թղթի փոքր չափերի պատճառով նշում է միայն կարևոր երկրները: Եվրոպայում նշված են Հունաստանը, Իտալիան, Գերմանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան և Օսմանյան կայսրությունը, անվանափոխված՝ «Անատոլիա»: Իսկ Կովկասի հարավում նա նշում է միայն հետևյալ երկրները՝ Հայաստան, Սիրիա և Պարսկաստան:



Քարտեզ 30. Օրտելիուսի Աշխարհացույցը նրա 1595 թ. ատլասից:



Այս դետալում տեսանելի է, որ Կովկասի հարավում ցուցադրված է միայն մեկ երկիր՝ Հայաստանը: Դրա մոտակայքում նշված են միայն մի քանի կարևոր քաղաքների անուններ:

Հյուսիսում Դերբենդն է, արևելքում՝ Թավրիզը, հարավում՝ Մոսուլը, Հալեպը, Շիրազն ու Շոշը, Երոսաղեմն ու Բաղդադը, իսկ արևմուտքում՝ Տրապիզոնն ու Տրոյան:

←Քարտեզ 31. Կովկասը քարտեզ 30-ից:

Քարտեզը ցուցադրում է Հայաստանը միջին դարերում՝ նախքան Բյուզանդիոնի և Իրանի ասպատակումները: Այդ օրերին հայ վաճառականներն աշխույժ և գործունյա կապեր ունեին իտալական առևտրական կենտրոնների հետ և հայերի՝ հատկապես Կիլիկիայի հայկական թագավորության, համբավը քաջ ծանոթ էր իտալական առևտրական, ինչպես նաև արվեստի ու իշխանական շրջանակներում: Այսպիսով՝ Ֆլորենցիայի կարևոր պալատներից մեկի սրահում Հայաստանի քարտեզը ցուցադրվում էր որպես աշխարհի 53 քարտեզներից մեկը:

Այս կապերն այնքան խորն էին, որ 16–18–րդ դարերում իտալացի կոմպոզիտորներից շատերը Տիգրան Մեծի կյանքին ու գործունեությանը նվիրված ավելի քան 20 օպերա են հորինել, որոնցից մեկն է հանրահայտ Անտոնիո Վիվալդիի (1678–1741 թթ.) գործը, իսկ Ֆրանչեսկո Կավալլին (1602–1676 թթ.) Էրիսմենա անունով օպերա է հորինել, որի հերոսուհին նույնանուն հայ իշխանուհի է:

Նույնիսկ տեսակետ կա, որ Կազանովան անվանափոխ հայ էր, ում ընտանեկան բուն ազգանունը եղել է Նորատունկյան: Ս. Ղազարի Միաբանության վանական հայր Ղևոնդ Ալիշանը կազմել է ցուցակներ, որտեղ նա արձանագրել է բազմաթիվ հայերի անուններ, ովքեր փոխել են իրենց ազգանունը՝ Վենետիկի հասարակության մեջ ընդունվելու նպատակով: Ըստ նրա՝ 18–րդ դարում կոստանդնուպոլսեցի Նորատունկյաններն իրենց ազգանունը փոխել են Կազանովայի, և Զիակոմո Կազանովան այս ընտանիքից էր¹⁰:

Քարտեզում Մեծ Հայքի անունը (որն ընդգծված է կարմիրով) տարածված է հարավ-արևմուտքում՝ Տավրոսյան լեռներից մինչև Սևանից հյուսիս՝ Լոռի և Շամախի, որոնցից վերջինն այսօր Ադրբեջանի Հանրապետության տարածքում է:



Քարտեզ 32. «Հայաստան» քարտեզը Ֆլորենցիայի Պալացցո Վեքքիոյի Ստանցայի Գարդառոբա սրահում:
Նկարիչ՝ Ստեֆանո Բոնսինյորի, 1575 թ.:

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ

Միջնադարյան շրջանում հայ ժողովրդի դժվարին ժամանակներից էին մոտավորապես 1453 թ. օսմանների կողմից Կոստանդնուպոլիսը գրավելը և 1502 թ. և Իրանում Սեֆյանների թագավորության հիմնադրումը, երբ հարևանների ոտնձգություններն ու ասպատակումները պատմական Հայաստանի հողերի վրա ապրող ժողովրդի հանդեպ ավելի հաճախակի դարձան: Շուրջ 200 տարի շարունակ շիա սեֆյանները, սուննի օսմանների երդվյալ թշնամիները լինելով, անընդմեջ պատերազմների մեջ էին, որից տուժողը հայ ժողովուրդն էր, քանի որ Հայաստանը, հարելով երկու պետությունների սահմաններին, նրանց ճակատամարտերի մարտադաշտն էր դառնում:

Շահ Աբբասն Իրանի գահին բարձրացավ 1588 թ.՝ օսմանների և ուղբեկների դեմ թեժ մարտի օրերին: Նա աստիճանաբար ստեղծեց մի բարգավաճ երկիր, որն ապագայում շնորհիվ հայերի Եվրոպայում հայտնի դարձավ իր զարգացած արվեստով և առևտրական կապերով: Բայց դրան հասնելու համար կարևոր էր ունենալ խաղաղություն, հետևաբար 17-րդ դարակզբին՝ Արևելյան Հայաստանը գրավելուց հետո, Շահը որոշեց Նախիջևանի, Սյունիքի և այլ շրջանների շուրջ 300 000–400 000 տեղացի հայերի, պարտադրաբար տեղահանելով, փոխադրել Պարսկաստան: Այս տեղահանումն ուներ մի քանի դրդապատճառ: Առաջին՝ հայերի մեծ կային մեծ թվով առևտրականներ, որոնք արդեն մշտական կապեր ունեին Ռուսաստանի և Եվրոպայի առևտրական կենտրոնների հետ, մյուս կողմից՝ նրանց մեջ կային նաև մեծ թվով մասնագետ արհեստավորներ և վարպետներ: Սրանց բոլորի օգնությամբ Շահ Աբբասը ծրագրում էր ստեղծել և զարգացնել իր առևտրական կապերը, միաժամանակ վարպետ արհեստավորների միջոցով զարգացնել Պարսկաստանի համեմատաբար ոչ բարձր մակարդակի արհեստագործությունը:

Առկա էր նաև մեկ այլ կարևոր՝ ռազմական «այրված հողի» ստրատեգիան: Արևելյան Հայաստանից տեղահան անելով հայ գյուղացիներին ու քաղաքացիներին և նրանց պաշարն ու ունեցվածքը կրակի տալով՝ շրջանը դառնում էր անհյուրընկալ և օսմանյան բանակի համար ոչ պիտանի: Այդպիսով օսմանները հավանաբար հետաքրքրված չէին լինի տարածքը գրավելու, և հնարավոր կլիներ ժամանակավոր խաղաղություն հաստատել: Այդպես հայաթափվեցին Արաքսի հարևանությամբ բազմաթիվ հայկական գյուղեր ու բնակավայրեր:

Աքսորի դաժան ճանապարհին չզիմացան հազարավոր անհատներ, սակայն նրանք, ովքեր դիմացան, տեղավորվեցին Իրանի տարբեր քաղաքներում, իսկ մեծամասնությունն ու առևտրական խավը՝ Իրանի մայրաքաղաք Սպահանում և դրա շրջակայքում: Սպահանի արևմուտքում Շահը հայերին հողեր հատկացրեց և իրավունք տվեց կառուցելու տներ և նույնիսկ քաղաքն անվանել հարազատ՝ նորերս հայաթափված քաղաքներից մեկի՝ Ջուղայի, պարսկերեն՝ «Նոր Ջուլֆա» անունով:

Առաջին տասնամյակների ընթացքում այստեղ կառուցվեցին Ս. Ամենափրկիչ վանքը և տասնյակից ավելի եկեղեցիներ, իսկ 1638 թ. Նոր Ջուղայում հիմնվեց Իրանի առաջին տպարանը: Հայ առևտրականներին տրվեցին միջոցներ՝ սերտ կապեր հաստատելու եվրոպական երկրների հետ: Նրանք նաև կապեր հաստատեցին Հնդկաստանի, Բիրմայի և Հեռավոր Արևելքի այլ երկրների հետ¹¹:

Չնայած այն պարագային, որ Շահ Աբբասը հայ բնակչության մեծ մասին բռնագաղթեցրեց Իրան, բայց շրջանում մնացած փոքրաթիվ հայ ժողովուրդն աստիճանաբար վերակազմակերպվեց, հատկապես Արցախի անառիկ շրջաններում և Սյունիքում: Այստեղ իշխող հայ մելիքները մինչև 19-րդ դար

ղեկավարում էին իրենց կիսանկախ իշխանությունները: Նրանց կառուցած ապարանքների մի մասն այսօր դեռ կիսականգուն է¹²:

Երբ Ռուսաստանի կայսր Պետրոս Առաջինը գրավեց Կովկասի մի մասը, հայ ժողովուրդը հույս ուներ, որ քրիստոնյա ուսաներն իրենց կօժանդակեն բարեկամ Հայաստան պետություն հիմնադրելու ծրագրին: Սակայն ոտա բանակը նահանջեց՝ հայերին թողնելով ավելի հուսախաբ և դժվար վիճակում: Դրանից քիչ առաջ էր, որ Հայաստանում և Սյունիքում սկիզբ առավ անկախության գաղափարներին հետևող անհատների գործունեությունը: Նրանց ղեկավարն էր Իսրայել Օրին (1659–1711 թթ.), ապա ակտիվ աշխատանք տարավ իրանահայ Հովսեփ Էմինը (1726–1809 թթ.), ովքեր կրկին հույս էին դնում Ռուսական և Բրիտանական կայսրությունների օժանդակության վրա: Կայսրություններից ոչ մեկը հայ հայրենասերներին չընդառաջեց, և նրանց դիմումները մնացին ապարդյուն: Սրանցից ավելի իրական գործ կատարեց սյունեցի Դավիթ Բեկը (մահ. 1728 թ.), ով իր հայ զինյալների հետ միասնաբար ստեղծեց կարճատև անկախ մի հայկական շրջան: Սակայն նա չկարողացավ Պարսկական և Օսմանյան կայսրությունների ճնշումներին դիմանալ, և Սեֆյանների վերջին թագավոր Շահ Թահմասպ Երրորդը նրան հաղթեց ու կրկին գրավեց Սյունիքի տարածքը:



Քարտեզ 33. Հոլանդացի քարտեզագետ Մերկատոր–Հոնդիուսի Թուրքական [օսմանյան] կայսրության քարտեզը, 1619 թ.: Քարտեզից Հայաստանի մասն առանձնացված է քարտեզ 34-ում:



Քարտեզ 34. Հայաստանը Մերկատոր-Հոնդիուսի քարտեզից, 1619 թ.:

Մերկատորի պատրաստած ատլասից վերցված՝ Թուրքական կայսրություն կոչված քարտեզի այս մասում հնարավոր է տեսնել, թե ինչպես է Հայաստանը բաժանված Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև: Դեղին տարածքում պարսկական մասն անվանված է «Հայաստան», իսկ կարմիրով ցուցադրված Օսմանյան կայսրության գրաված մասը կոչված է «Թուրքոմանիա», այսինքն՝ «Թուրքական Արմենիա»¹³: Վանա և Սևանա լճերը Պարսկաստանի գրաված տարածքում են: Այստեղ ընդգծված է այն պարագան, որ Հայաստանը գոյություն ունի, սակայն անկախ չէ, և նրա տարածքը բաժանված է երկու մեծ կայսրությունների միջև:

Քարտեզ 35-ը օսմանցի աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբիի Ջիհան-Նյումա (Աշխարհի հայելին) ուղեգրություններից Վանի նահանգի քարտեզն է, որը նա գծել է 1653 թ.: Ըստ ձեռագրի տեքստի՝ սա հայկական շրջան է, որը գրքի սակավաթիվ քարտեզներից մեկն է: Քարտեզի տեղանունների բացատրությունը տրված է քարտեզ 36-ում: Քարտեզն ուղղորդված է վերն արևելքով՝ նշելով շրջանի կարևոր քաղաքները և Վանա լիճը¹⁴: Աջ անկյունում ցույց է տրված Կասպից ծովի հարավարևմտյան ծայրամասը:

Չելեբին եռանդուն և շատ բան նկատող ճանապարհորդ էր և իր ուղևորությունները սկսեց 1630-1640 թթ., շարունակեց 1648 և 1653 թթ., սակայն մահացավ նախքան իր ծրագրի ավարտը: Նրա տեքստը պարունակում է 41 գլուխ, որոնցից վերջինը անվանված է Էրմենիյե (Հայաստան), որտեղ նա գրում է Մեծ Հայքի և Փոքր Հայքի մասին՝ նշելով, որ Փոքր Հայքը Օսմանյան տերության տարածքում է, իսկ Մեծ Հայքը՝ Պարսկաստանի սահմաններում:

Իր աշխատանքում նա անդրադառնում է նաև հայոց հնագույն պատմությանը՝ խոսելով Հայկ նահապետի մասին, նշում Վանի և Երվաթի Հայաստանի մայրաքաղաքներ լինելը, սելջուկ-թուրքերի՝ Հայաստանը գրավելը, հայ բնակչության փախուստը դեպի Կիլիկիա և մայրաքաղաքի փոխադրումը Միս ¹⁵:



Քարտեզ 35. Վան Վիլայեթի քարտեզը. Չելեբի, 1653 թ., Բրիտանական գրադարան, Լոնդոն:



Քարտեզ 36. Չելեբիի Վան Վիլայեթի քարտեզի տեղանունների թարգմանությունը:

Քարտեզ 37-ը ֆրանսիացի քարտեզագետ Ֆիլիպ Դյու Վալի 1676 թ. «Թուրքիայի, Արաբիայի և Պարսկաստանի քարտեզից» մի հատված է: Ինչպես նշվեց, նախկին քարտեզի տեքստը պատմում է, որ 1653 թ. Մեծ Հայքը Պարսկաստանի տարածքում էր, սակայն այստեղ սահմանը փոխվել է, ու Մեծ Հայքը համարյա ամբողջապես Օսմանական կայսրության գրաված տարածքում է, այսինքն՝ կանաչ սահմանագծից ձախ, որտեղ նշված է «Թուրքումանիա կամ Հայաստան» տեղանունը (տե՛ս բացատրություն 12): Օսմանյան կայսրության սահմանը հասնում է մինչև Վանա լիճ, Նախիջևան, Արարատներ և Երևան: Սահմանագծի աջում՝ Պարսկաստանի տարածքում են Ղարաբաղը և Շիրվանը: Այսպիսով՝ Իրանի սահմանը հետ էր քշվել արևելք օսմանների կողմից հայկական տարածքները գրավելու հաշվին:

Սա Իրան-Օսմանյան կայսրություն պատերազմների շրջանն էր, երբ երկու մեծ պետությունների սահմանները հաճախ փոփոխվում էին, և «չարժուն» սահմաններին տեղակայված հայկական գյուղերն ու քաղաքները պարբերաբար ենթակա էին դառնում այդ պետությունների ասպատակություններին, ինչից տուժում էին նրանց տնտեսությունները, ապրուստը, ինչի հետևանքով զոհվում էին հազարավոր մարդիկ:

19-րդ դարի առաջին տարիներից այս երկու հարևան երկրներին ավելացավ և ռազմադաշտ դուրս եկավ նաև Ռուսական կայսրությունը՝ նպատակ ունենալով իրագործելու իր տարածքները դեպի հարավ ընդլայնելու ծրագիրը:



Քարտեզ 37. Հատված Դյու Վալի Թուրքիայի, Արաբիայի և Պարսկաստանի քարտեզից, Փարիզ, 1676 թ.:



Քարտեզ 38. Իրանի քարտեզը՝ ըստ Մուսեֆերրիկայի խմբագրության, 1732 թ.:


Քարտեզ 38-ի բնագիրը Չելեբիի (քարտեզներ 35,36) Պարսկաստանի քարտեզն է, որը նրա ձեռագրի խմբագիր Մուսեֆերրիկան վերամշակել ու հրատարակել է 1732 թ.: Այստեղ Օսմանյան և Պարսկական կայսրությունների սահմանը քարտեզ 37-ի համեմատ ամբողջովին փոփոխված է: Պարսկական սահմանը տարածվել է դեպի արևմուտք ու ներգրավել Էրզրոմ և Դիարբեքիր քաղաքները, որը նաև ներառում է համարյա անբողջ Մեծ Հայքը, ինչպես նաև Կովկասի հարավում Վրաստանի ու Ադվանք/Շիրվանի տարածաշրջանը:

Իբրահիմ Մուսեֆերրիկան հունգարացի մասնագետ էր, որն, ընդունելով իսլամը, ամբողջովին խմբագրել և 1732 թ. հրատարակել է Չելեբիի ձեռագիրը՝ դրա մեջ տեղադրելով տարբեր, նույնիսկ եվրոպական աղբյուրներից վերցված քարտեզներ: Այս քարտեզի ցուցատախտակը նշում է, որ դրանում ցույց են տրված Պարսկաստանի Սեֆյանների իշխանության վերջին օրերի սահմանները: Քարտեզի վրա կարելի է տեսնել բնիկ հայ ժողովրդի ճակատագիրը որոշող դեպքերի դրոշմը, Հայաստանի՝ ձեռքից ձեռք անցնելու իրավիճակը:



Քարտեզ 39. Իրանի, Օսմանյան կայսրության, Ռուսաստան սահմանը՝ ըստ հոլանդացի Օտենդի քարտեզի, 1740 թ.:

Այս քարտեզում կրկին սահմանները փոփոխվել են, և Իրանը կորցրել է իր գրաված Հայաստանի տարածքի մի մասը, սակայն ոչ ամբողջը: Երևանը, Մուղանը, Շիրվանն ու Վրաստանի մի մասը դեռևս պարսկական գերիշխանության ներքո են:



Քարտեզ 40. Բրիտանացի դ'Անվիլի Պարսկական կայսրության քարտեզի հյուսիսարևելյան հատվածը, 1790 թ.:

Այս քարտեզում հեղինակը ցույց է տալիս Իրանի սահմանը Օսմանյան և Ռուսական կայսրությունների հետ: Օսմանների սահմանը շարժվել է դեպի արևելք, բայց դեռևս Իրանի տիրապետության տակ են Արևելահայաստանի մեծ մասը, ինչպես նաև Դաղստանը, Շիրվանը, Վրաստանի Քարթվելի և Կախեթի շրջանները: Ատրպատականը, այսինքն՝ պարսկական Ադրբեջան նահանգը, Արաքսի հարավային ափին նշված է որպես Իրանի նահանգներից մեկը:

Միջին դարերի վերջին տարիներին Իրանի և Ռուսական կայսրության տարածքում բնակվող հայ ժողովրդի գոնե միջին և բարձր խավերը աստիճանաբար զարգանում էին՝ բարելավելով իրենց տնտեսություններն ու ապրելակերպը, նոր սերունդներին տալով կրթության, Եվրոպայից ներմուծելով տարբեր ապրանքներ, սարքավորումներ, արդյունաբերական մեքենաներ և արվեստ:

17-րդ դարասկզբին բռնագաղթված և Իրանի Նոր Զուղայում հաստատված հայ վաճառականները քաջալերվում էին՝ սերտ կապեր հաստատելու եվրոպական կազմակերպությունների և առևտրական տների միջև, և այդ նպատակով ստանում առևտրական մենաշնորհներ: Այս պատճառով էր, որ նրանք առիթ ունեցան ներկրելու Միջին Արևելքի առաջին տպագրական հաստոցը և 1638 թ. տարածաշրջանում տպել առաջին գիրքը, որը հայերեն էր:

18-րդ դարի առաջին տարիներին Մխիթարյան միաբանության վանականները աբբահայր Մխիթար Սեբաստացու (1676–1749) ղեկավարությամբ Կոստանդնուպոլսից հեռացան, որպեսզի իրենց մշակութային և կրոնական աշխատանքների համար ազատ միջնորդ տ գտնեն: Ամստերդամի հայ տպագրատան փակվելու տարում՝ 1717 թ., Վենետիկի Ծերակույտը նրանց շնորհեց Վենետիկի ավագանում Ս. Ղազար կղզին, որտեղ նրանք հիմնեցին Մխիթարյան միաբանությունը: Նրանց նպատակն էր քաջալերել և տարածել հայ կրոնական ու գրական մշակույթի ժառանգությունը, որի համար այդտեղ հիմնեցին գրադարան, թանգարան և հետազոտական կենտրոն: Արագ զարգացան Մխիթարյանների գրական, ապա նաև քարտեզագրական հրատարակումները: Ժամանակին այնտեղ հայերեն է սովորել անգլիացի բանաստեղծ Լորդ Բայրոնը: Այսօր Մխիթարյանները Երևանի Մաշտոցի անվան մատենադարանից հետո Ս. Ղազարում ունեն ամենամեծ հայերեն ձեռագրերի հավաքածուն, ինչպես նաև մեծ գրադարան ու թանգարան, որը հայտնի է որպես Վենետիկի տեսարժան վայրերից մեկը:


ՏԱՍԵԻՆԵՐՈՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉ ԱՅՍՈՐ

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին պարսկական ծավալուն կայսրությունը հյուսիսում ընդգրկում էր հարավային Կովկասի մի մասը, որի մեջ էին Արևելահայաստանը, Արցախը, Շիրվանը, Շամախին, Դերբենդը և հարակից շրջանները: Քարտեզ 41-ում Պարսկաստանի գրաված տարածքները նշված են կանաչ և դեղին սահմանագծերով, իսկ Օսմանյան կայսրության տարածքը՝ կարմիրով, ինչպես դրանք գոյություն ունեին 1801-1812 թթ.: Քարտեզը պատրաստված է 1901 թ. Թիֆլիսում Կովկասի զինվորական շրջանի շտաբի կողմից:



Քարտեզ 41. Կովկասյան երկրամասի քարտեզը՝ պատրաստված 1901 թ.:


19-րդ դարասկզբին շուրջ 300 տարի Կովկասի մեծ մասին տիրող Պարսկաստանի գերիշխանությունն ավարտվեց, երբ ցարական Ռուսաստանը լրջորեն զբաղվեց դեպի հարավ իր ընդարձակման ծրագրով: Վերջին տարիների ընթացքում Իրանի Ղաջար թագավորական ընտանիքը, տանուլ տալով իր կարևոր երկու պատերազմները, աստիճանաբար Ռուսաստանին հանձնեց իր կովկասյան տարածքները: Քարտեզ 42-ը ցույց է տալիս 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին փոխանցված Դերբենդի, Շաքիի, Շամախիի և Ղարաբաղի խանությունները, ինչպես նաև Լոռին, Շիրակը և Վրաստանի տարածքը:



Քարտեզ 42. Իրանի և Ռուսաստանի սահմանը 1813 թ. հետո՝ 1826–1828 թթ. պատերազմի ժամանակ:


Այս ընթացքում Երևանի և Նախիջևանի խանությունները դեռ մնացել էին Իրանի գերիշխանության ներքո, սակայն 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով նրանք էլ անցան Ռուսաստանին, և Իրանի սահմանը վերադարձավ Արաքսի հարավային ափը: Ելնելով այն իրավիճակից, որ ցարական կայսրության բաժանումներով Երևան քաղաքի շրջակա տարածքը Ռուսաստանի գերիշխանության ներքո կոչվել էր Երևանի նահանգ, ներկա Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները հայտարարում են, որ Հայաստանի տարածքը միայն այդ Երևանի նահանգն է՝ մոռանալով, որ սա միայն Երևան քաղաքի նահանգն է, և դրան կից է նաև Նախիջևանը, որը նրանք համարում են ադրբեջանական հող: Սակայն վերհիշենք, որ մինչև 1918 թ. Արաքսից հյուսիս որևէ Ադրբեջան գոյություն չուներ:

Տիրանալով Կովկասի ամբողջ տարածքին մինչև Արաքս՝ 1828-ից մինչև 1914 թ. ցարական Ռուսաստանը այս շրջանը բաժանեց և վերաբաժանեց վարչական ձևավորումներով, առանց որևէ կարևորություն տալու բնակչության ազգագրական դիմագծին: Համարյա ամեն տասնամյակ այս բաժանումները փոփոխվում էին՝ ըստ ղեկավարության ցանկության և քմահաճույքի¹⁶:



Քարտեզ 43. Կովկասյան գորամասի ընդհանուր կորպուսի Կովկաս երկրամասի քարտեզից հատված, 1834 թ.:

Քարտեզ 43-ը ցույց է տալիս, որ 1813 թ. Ղարաբաղի (1), Շիրվանի (2), Թալիշի (3) և Գանձակի շրջանները կորցնելուց հետո 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Իրանը կորցրեց նաև Երևանի և Նախիջևանի խանությունները (4): Քարտեզում Ռուսական և Օսմանյան կայսրությունների սահմանը նշված է կանաչ, իսկ Իրանի սահմանը՝ կապույտ: Այստեղ Երևանի նահանգի և Օսմանյան կայսրության սահմանն անցնում է Արարատների գագաթներով, որը նշված է կարմիր սլաքով: Այդ ժամանակ Կարսի շրջանը (5) դեռ Օսմանյան կայսրության տարածքում էր, որը 1878 թ. անցավ Ռուսաստանին: Իսկ 1921 թ. խորհրդային իշխանությունները Կարսի պայմանագրով Թուրքիային հանձնեցին Կարսի մարզը, Արարատները և Սուրմալուի գավառը:



Քարտեզ 44. Հայկական մարզ կոչված տարածքը ցարական Ռուսաստանի Անդրկովկասում, 1830 թ.:

Քարտեզը ցույց է տալիս Հայաստանի շրջանը, որը Ռուսաստանին էր անցել Իրանի հետ 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով: Սրա սահմանակից շրջաններն են արևելքում՝ Ղարաբաղը, իսկ հյուսիսում՝ Ելիզավետպոլը, Վրաստանը և Փամբակը:


Սահմանների փոփոխությունից մի քանի տարի անց շրջանը կոչվում էր Հայկական մարզ, իսկ հետո անվանափոխվեց Էրիվանի նահանգ, որի մեջ էր մտնում նաև Նախիջևանը: Երկու շրջանների անունները և սահմանները պարզապես ռուսական վարչակարգի քմահաճույքի և դպրոցական համար էր արվել, որոնք ժողովրդագրության հետ ոչ մի առնչություն չունեին: Նույն ընթացքում Բաքվի նահանգի մեջ էր մտնում միայն Ափշերոն թերակղզու հարակից շրջանը՝ Ղուբայից մինչև Իրանի սահմանը, այսինքն՝ ներկա Ադրբեջանի տարածքի միայն մեկ հինգերորդը՝ առանց Շուշի, Ելիզավետպոլ (Գանձակ) և Նուխի քաղաքների:



Քարտեզ 45. Ղարաչեղաղիի Իրանի քարտեզից երկրի հյուսիսարևմտյան մասի քարտեզը, 1869 թ.։

Պարսկերենն առաջին տպագիր քարտեզը պատրաստել է քարտեզագետ Ղարաչեղաղին, որը տպվել է Թեհրանում 1869 թ.։ Քարտեզից ներկայացված հատվածն Իրանի հյուսիսարևմտյան սահմանն է՝ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հետ։ Ռուսաստանի գրաված տարածքում՝ Արաքսից հյուսիս, նշված են Շիրվանն ու Գանձակը։ Իրանցից արևմուտք նշված է Հայաստանը և ավելի մանր տառերով՝ Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի շրջանները։ Ղարաբաղից հարավ՝ Արաքսի մյուս ափին է Իրանի տարածքում հայկական Ղարաբաղ գավառը։ Վարդագույնով նշված է Իրանի Ադրբեջան/Ատրպատական նահանգը։

Մինչև 1918 թ. Իրանի և Ռուսաստանի սահմանները մնացին նույնովից, բայց 1877–1878 թթ. Ռուսաստանը երկու հայ գեներալների՝ Լոռի–Մելիքովի և Լազարևի ղեկավարությամբ գրավեցին Կարսի նահանգը և Սուրմալուի գավառն ու Արարատները։ Արդյունքում՝ Սան Ստեֆանոյի պայմանագրով 1878 թվականից Կարսը, Արդահանը, Իգդիրը, Անին և Արարատներն անցան Ռուսաստանի գրաված տարածքի մեջ (տես քարտեզ 48)։



Քարտեզ 46. 1860 թ. Ջոնսոնի գծած ռուս-թուրքական սահմանը:

Կովկասի հարավում Իրանի գրաված տարածքները յուրացնելուց հետո Թիֆլիսում հաստատված Անդրկովկասի վարչությունը սկսեց տարածաշրջանը բաժանել ավելի դյուրին կառավարելի նահանգների և շրջանների: Ինչպես նշվեց, այս բաժանումները և նրանց անվանումները պարբերաբար փոփոխության էին ենթարկվում: Օրինակ՝ հայերով բնակեցված Արցախ/Ղարաբաղը 1828–1839 թթ. անվանված էր Ղարաբաղի գավառ (Провинция, տես քարտեզ 43): 1840–1859 թթ. այն ներառվեց Շամախիի նահանգում, 1860–1865 թթ. անցավ Բաքվի նահանգի մեջ, ապա 1881–1918 թթ.՝ Ելիզավետպոլի նահանգում:

Հայաստանի կենտրոնական մասը առանձնացած է և կոչված Երևանի մարզ: Վրաստանը բաժանված է Աբխազիայի, Քութայսիի, Մեգրելիայի և Թիֆլիսի նահանգների: Բաքվի նահանգը ներառում է

բուն Հայաստանի Սյունիք, Արցախ և Զանգեզուր շրջանները: Սակայն անգլիացի քարտեզագետը Թուրքիայի Վանա լճի մոտակայքից մինչև Սևանա լճի հարավի վրա մեծ տառերով նշել է «Հայաստան», քանի որ այս տարածաշրջանում հիմնականում բնակվել և բնակվում էին հայեր:



Քարտեզ 47. Ռուս-թուրքական 1877–1878 թթ. ռազմական քարտեզի արևելյան հատվածը, Ստամբուլ, 1878 թ.:

Օսմանյան այս քարտեզը պատրաստել է կայսրության Ռազմական նախարարությունը: Այստեղ «Հայաստան» անունը տրված է Էրզրոմից (հյուսիսում) մինչև Վանա լիճն ու Բիխլիսը (հարավում), Մալաթիայից (արևմուտքում) մինչև Արևելահայաստանի Սևանի շրջանը (արևելքում): Այսինքն՝ «Հայաստանը» տեղադրված է Օսմանյան և Ռուսական կայսրությունների գրաված տարածքներում՝ Արաքսի երկու ափերին: «Ադրբեջան» անունը տրված է Իրանի Ատրպատական նահանգին, իսկ Վրաստանը և Դաղստանը Հայաստանից հյուսիս-արևելք են: Ներկա Ադրբեջանի հանրապետության տարածքն անվանված է «Շիրվան», որը ժամանակին այս տարածքի ընդունված անվանումն էր:

Ըստ ռուս-թուրքական պատերազմի ավարտին՝ 1878 թ. փետրվարին ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի Հոդված 16-ի՝ պարտված Օսմանյան կայսրությունը հանձն էր առնում վերջ տալ հայերի հալածանքերին: Կայսրության հայկական վիլայեթներ էին ուղարկվելու ռուս և եվրոպացի զիտորդներ՝ վստահանալու, որ պայմանագրի պայմանները կատարվում են: Սակայն Մեծ Բրիտանիայի

վարչապետ Բենյամին Դիգրայելիի համար այս նախաձեռնությունն ընդունելի չէր, և նա 1878 թ. հուլիսին Բեռլինում կազմակերպեց մեկ այլ վեհաժողով Սան Ստեֆանոյի հոդվածների մեջ փոփոխություններ մտցնելու նպատակով՝ պատճառաբանելով, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը Ռուսաստանին իրավունք էր տալիս հասնելու հարավային ծովերի նավահանգիստներ, որը Բրիտանիայի համար անընդունելի էր:


Այսպիսով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը լուծարվեց, և դրան փոխարինեց 1878 թ. Բեռլինի կոնգրեսի դաշնագիրը, որով հայերին վերաբերող հոդված 16-ը տարրալուծվեց, և դրա իրագործումը հանձնվեց արևմտյան պետությունների վերահսկողությանը: Անգամ Օսմանյան կայսրության մեջ ապրող հայերի ճակատագիրը և մնաց եվրոպական՝ իրար հետ հակասություն ունեցող պետությունների հայեցողությանը: Որպես հատուցում՝ Օսմանյան կայսրությունը Մեծ Բրիտանիային հանձնեց Կիպրոսը՝ ռազմական հենակետ դարձնելու նպատակով, և հայերի արյան գնով սուլթանն ու Դիգրայելին լուծեցին իրենց խնդիրները: Որպես հայկական պատվիրակության ղեկավար՝ Խրիմյան Հայրիկը և մասնակցեց 1878 թվականի Բեռլինի վեհաժողովին, որից վերադարձավ հուսախաբ:



Քարտեզ 48. Չննսոնի ոռու-օսմանյան սահմանը 1878-ից հետո՝ մինչև 1914 թ.:

Վերի քարտեզը ցույց է տալիս 1878-1881 թթ. ոռու-թուրքական սահմանը Կարսի և դրա շրջակայքի գրավումից հետո, որը նշված է կարմիր գծով: Ռուսաստանի տարածքում է Երևանի նահանգից

արևմուտք ընկած Կարսի մարզը: Այս մարզը ներառում է Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արգահանի, Ալաշկերտի և Բայազետի գավառները, ինչպես նաև Բաթումը և դրա շրջակա Սև ծովի տարածքը:



Քարտեզ 49. 1890–ական թթ. ջարդերից փախստականների բռնած ուղղությունները, ՀՀ Ազգային աստլա, հատոր 2, էջ 84:

Օսմանյան կայսրության տարածքում հայերի վրա ճնշումները և անարդարությունները շարունակվում էին, քանի որ հայաբնակ շրջանները, լինելով Թուրքիայի հեռավոր արևելքում, արևմտյան պետությունների համար կարևոր խնդիր չէին համարվում: Այս անտարբերության արդյունքում որոշ հայրենասեր հայեր սկսեցին կազմակերպել քաղաքական կուսակցություններ՝ դիմադրելու կենտրոնական իշխանությանը և պահանջելու իրենց իրավունքն ու սահմանափակ ներքին ինքնավարություն: Այս ուղղությամբ առաջինը 1885 թ. Վանում հիմնադրված Արմենական կուսակցությունն էր, որին հետևեցին Սոցիալ դեմոկրատ հնչակյանը՝ 1887 թ. Ժնևում, և Հայ հեղափոխական դաշնակցությունը՝ 1890 թ. Թիֆլիսում:

1890–ականների առաջին տարիներին Սասունում դժգոհությունները փոխվեցին ցույցերի և ապաբողոքների՝ տիրող սոցիալ-տնտեսական պայմանների դեմ: Այս շրջանը հիմնականում բնակեցված էր

հայերով, որոնք ինչ-որ կերպ գոյակցում էին զինյալ քուրդ ցեղերի հետ, սակայն որպես երկրորդ կարգի քաղաքացիներ: Հայերը պարտադիր վճարում էին պետական տարբեր հարկեր, սակայն երբ քուրդ ցեղապետերը պարտադրեցին վճարել նաև «ամուսնություն» հարկ, հայ գյուղացիները ճարահատյալ բողոքեցին՝ հայտարարելով, որ անկարող են նման հավելյալ հարկեր վճարել:

Ի պատասխան՝ օսմանյան կենտրոնական իշխանությունը բանակ ուղարկեց՝ ճնշելով և սպանություններով դիմակայելով հայ գյուղացու խաղաղ բողոքներին: Հայկական գյուղերից շատերը ենթարկվեցին կոտորածների, որոնք նաև իրագործվեցին կայսրության բոլոր հայկական վիլայեթներում: Արդյունքում կոտորվեցին տասնյակ հազարավոր անզեն հայեր, որի լուրը 1894 թ. հասավ Եվրոպա, որտեղ սկսվեցին ճնշումներ օսմանական պետության վրա՝ պարտադրելու դադարեցնել կոտորածները և օգնելու աղետյալներին: Լոնդոնի և Փարիզի շաբաթաթերթերում հայերի հալածանքների մասին 1894–1896 թթ. բազմաթիվ պատկերազարդ հոդվածներ էին հրատարակվում, որի հետևանքով մի քանի կրոնական կազմակերպություններ բարեգործական օգնություն ուղարկեցին Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներ:

Սկզբում օսմանյան իշխանությունները կտրականապես հերքում էին կոտորածների մեղադրանքները, բայց երբ ուղարկված չեզոք դիտորդները բացահայտեցին պետականորեն կազմակերպված կոտորածների ծավալը, Ստամբուլի հայությունը և մայրաքաղաքում ցույցի դուրս եկավ պաշտոնական քաղաքականության դեմ, իսկ իշխանությունները պատժամիջոցներն էլ ավելի խստացրին: 1895 թ. վերջերին Թուրքիայի արևելյան վիլայեթների հայկական գյուղերում ու քաղաքներում իշխանությունները որպես պատիժ իրագործեցին դաժան կոտորածներ: Մոտ 300 000 հայեր սպանվեցին, և որպես բողոքի նշան՝ 1896 թ. օգոստոսի 14-ին Հայ հեղափոխական դաշնակցության անդամները Ստամբուլում գրավեցին Բանկ Օտոմանը:

Այս սանձարձակ կոտորածները պատճառ դարձան, որ հազարավոր հայ ընտանիքներ փախուստի դիմեն՝ թողնելով իրենց պապենական հողը և ապաստան գտնելով օտար երկրներում: Հայկական նորագույն Սփյուռքն այսպիսով հիմնվեց Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլ երկրներում: Նշված երկու երկրներում այսօր հայկական Սփյուռքի անդամների թիվը հասնում է շուրջ 400 000 և 2 000 000 մարդու:

1894–1896 թթ. կոտորածներից հետո Օսմանյան կայսրության տարածքում հայերի համար անկայուն և սպասողական վիճակ էր ստեղծվել, և աստիճանաբար պարզ էր դառնում, որ հայ համայնքի համար թուրքական ճնշումներից որևէ պաշտպանություն չկար: Ռուսաստանի գրաված Հայաստանում, չնայած որ ճնշումներն անդադար չէին, բայց իրավիճակն ավելի բարենպաստ էլ չէր: Յարն աստիճանաբար դառնում էր ավելի ինքնակամ բռնապետ և 1880 թ. փակել տվեց հայկական դպրոցները, ու 1903 թ. ռուս զինվորները գրավեցին Էջմիածնի կաթողիկոսարանը: Ռուս ուղղափառ կայսրից նման վերաբերմունք չսպասելով՝ հայ կղերականներն ընդվզեցին, քանի որ նրանց համար այս վերաբերմունքն անընդունելի էր: Նույնիսկ հայ բուրժուազիան դեմ դուրս եկավ ցարին: Սրա դեմն առնելու նպատակով ցարական իշխանության հրահրմամբ, որպես սպառնալիք և նախազգուշացում, Ղարաբաղում և Բաքվում 1905 թ. հայերի պատժիչ ջարդեր կազմակերպվեցին: Միայն 1912 թ. էր, որ ռուսական Հայաստանում հայերի դեմ ճնշումները դադարեցին:

Այս ընթացքում Կոստանդնուպոլսում Օսմանյան կայսրությունը կորցնում էր իր ուժը և 1889 թ. մի խումբ երիտասարդ և փառասեր զինվորականներ, կազմակերպեցին Միասնության և առաջադիմության (Իթիթիհադ վե թերեկկի) համագումար անվանված կազմակերպությունը, որոնք ապագայում ճանաչվեցին որպես «երիտթուրքեր»: 1908 թ. տապալելով սուլթանին՝ նրանք վերականգնեցին 1876 թ. սահմանադրությունը: Քանի որ երիտթուրքերը հայ կուսակցական ղեկավարներին խոստացել էին

ժողովրդավարական կարգավիճակ և սահմանափակ ինքնավարություն, հայ քաղաքական կուսակցությունները նրանց դաշնակից մնացին: Կարճատև խաղաղ ժամանակից հետո՝ 1909 թ., երիտթուրքերի դեմ հակահեղափոխական շարժում սկսվեց, որի նպատակն էր երկրի օրենսդրությունը համապատասխանեցնել Շարիաթի իսլամական օրենքներին և վերականգնել սուլթանի բացարձակ իշխանությունը: Սակայն այս շարժումն էլ չեզոքացվեց, և երիտթուրքերն ամբողջապես ստանձնեցին երկրի կառավարումը, և քաղաքականությունն աստիճանաբար սկսեց հակվել դեպի ազգայնամոլություն:

Նույն տարվա ընթացքում Ադանայի և Հալեպի վիլայեթներում կառավարությունը կազմակերպեց հայերի ջարդ, որի ընթացքում շուրջ 30 000 անմեղ հայեր ջարդերին զոհ դարձան: Այս կոտորածների բուն պատճառն այն էր, որ 1890–ական թթ. հայերի կոտորածների ժամանակ Ադանայի հայությունը ապստամբել և սատար էր կանգնել իր հայրենակիցներին: Երիտթուրքերը վախ ունեին, որ հայերը կրկին անարդարության դեմ կապստամբեն և նույնիսկ կարող են Կիլիկիայի անկախությունը պահանջել: Նման քայլեր կանխելու նպատակով էր, որ կազմակերպվեցին Ադանայի և Հալեպի ջարդերը: Սրանք իրականացնելու համար տեղացի թուրքերին և քրդերին զենք բաժանեցին, և հարյուրավոր մեղապարտներ բանտերից ազատ արձակվեցին՝ ստանալով կոտորելու և թալանելու թույլտվություն:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի օրերին և դրան հաջորդող տարիների ընթացքում հայ ժողովուրդն անցավ իր ամբողջ պատմության մեջ տեղի ունեցած ամենամեծ արհավիրքի միջով: 1915–1923 թթ. Օսմանյան կայսրության և Արևմտահայաստանի ամբողջ տարածքում իրագործվեց քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը:


1914 թ. հուլիսին՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, ՀՅԴ–ն (Դաշնակցությունը) Էրզրումում կազմակերպել էր իր 8–րդ համագումարը: Համագումարի օրերին երիտթուրքերի ներկայացուցիչներն առաջարկեցին, որ հայերը ուսական Կովկասի հարավում՝ Թուրքիային սահմանակից շրջանում, կազմակերպեն ապստամբություն, որի փոխարեն նրանք խոստանում էին իրենց հովանավորության ներքո հիմնել ինքնավար Հայաստան: ՀՅԴ–ն առաջարկը չընդունեց՝ առաջարկելով, որ սպասվելիք պատերազմում Օսմանյան կայսրությունը մնա չեզոք, իսկ եթե դա հնարավոր չլինի, ապա հայերին խորհուրդ կտրվի որպես օսմանյան քաղաքացիներ անել իրենց քաղաքացիական պարտականությունը:

Երբ պատերազմը սկսվեց, հայերն իրապես իրենց դրսևորեցին որպես օսմանյան քաղաքացիներ, ու նրանցից շուրջ 60 000 հոգի զորակոչվեցին օսմանյան բանակ¹⁷:

Հետևելով դեպի արևելք ընդլայնվելու իրենց նպատակին՝ թուրքական բանակը Էնվերի ղեկավարությամբ Սարիղամիշում հարձակվեց ուսական բանակի վրա, բայց լինելով անպատրաստ, հատկապես ձմեռվա եղանակին դիմանալու համար օսմանյան բանակը, 1914–1915 թթ. հսկայական կորուստներ կրելով, պարտվեց, և միայն հայ զինվորների օգնությամբ Էնվերը կարողացավ ցարական զորքերից փախուստի դիմել ու ողջ մնալ:

Շուտով դեպքերը հասան իրենց ողբերգական փուլին: Օսմանյան բանակի հայ զինվորները զինաթափվեցին և ուղարկվեցին աշխատանքային գումարտակներ, որտեղ նրանց մի մասը սովամահ եղավ, իսկ ողջ մնացածներն էլ սպանվեցին: Ստամբուլում 1915 թ. ապրիլի 24–ին ավելի քան երկու հարյուր հիստոն հայ մտավորականներ, պաշտոնյաներ ու համայնքի ղեկավարներ ձերբակալվեցին ու աքսորվեցին, ապա և սպանվեցին¹⁸: Ըստ անգլիացի պատմաբան և հայոց պատմության մասնագետ Քրիստոֆեր Ուոքերի.

Այն, ինչ պատահեց հաջորդող ամիսների ընթացքում, հայ ժողովրդի Յեղասպանությունն էր: Փոքր Ասիայի և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում, նույնիսկ ռազմադաշտերից հարյուրավոր կիլոմետրեր հեռու համարյա բոլոր հայ համայնքներից հայ տղամարդկանց, կանանց, երեխաների ու ծերերի ինքնությունը հաստատելով, կարճ ժամկետում նրանց հանելով իրենց տներից ու բնակավայրերից, անօթևան, անպաշտպան և առանց պարենի նախապատրաստված ճանապարհներով մեծ մասամբ ոտքով քշեցին դեպի սիրիական անապատները: Նրանց մի մասը սպանվեց իրենց բնակավայրերի մատույցներում, իսկ մյուսները պարբերաբար ենթարկվում էին բանդիտների և ալիազակ ցեղախմբերի հարձակմանը, թալանին և բռնաբարություններին¹⁹:



Քարտեզ 50. Վանի հատակագիծը՝ ըստ Մյուլլեր-Սիմոնիսի, 1914 թ.:


1915 թ. մարտին Վանի շրջակա գյուղերում իշխանությունները կազմակերպեցին զանգվածային ջարդեր, որոնց լուրը հասավ Վան, և տեղի հայ բնակչության ղեկավարների համար պարզ դարձավ, որ հաջորդ գոհերն իրենք են լինելու, և ողջ մնալու համար անհրաժեշտ է կազմակերպել ինքնապաշտպանություն: Երբ Վան վերայեթի ղեկավարը՝ Ջևդեթ բեյը, պահանջեց վանեցիներին հանձնվել, քաղաքի բնակչությունը որոշեց դիմադրել: Շուրջ 1 000-ի հասնող հնացած զենքերով ու տնական պայմաններում պատրաստված զինամթերքով Վանի ժողովուրդը, Այգեստան և Քաղաքամեջ հայաբնակ թաղամասերում պատրաստելով խրամատներ և դիրքեր, իրենց կյանքը կարողացան պաշտպանել վաղի բերած օսմանյան պետական բանակից:

Սա ոչ թե ապստամբություն էր (ինչպես հետագայում օսմանյան իշխանություններն էին մեկնաբանում), այլ պարզ ինքնապաշտպանություն: Հայերը կարողացան իրենց դիրքերը պահել, մինչև որ ոտական բանակը մոտեցավ քաղաքին, և օսմանները նահանջեցին: Այսպիսով Վանի բնակչության մեծամասնությունը փրկվեց՝ մազապուրծ ճողպրեղով թուրքական կազմակերպված ջարդերից: Սակայն երբ ոտական բանակը որոշեց Վանը թողնել, վանեցիներին այլ ընտրություն չտրվեց, քան բնաջնջվելուց խուսափելու համար լքել իրենց քաղաքն ու երկիրը և գաղթել դեպի ոտական Հայաստան: Որպես վրեժ՝ օսմանյան իշխանությունները հայկական Վանը հողին հավասարեցրին. Քաղաքամեջ թաղամասի ավերակները պարզորոշ երևում են նույնիսկ մեր օրերում (տես քարտեզներ 50–53):

Քարտեզ 51. Վանի ինքնապաշտպանության քարտեզը՝ ըստ Խերանյանի, 1915 թ.:



Վասպուրականցի թագ միշտ իշխ. Արարիկ եղբոր



Լ. Գ. Ե. Բ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ.

Գ. Ե. Բ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ.


Գ. Ե. Բ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Ը. Թ. Ժ. Ի. Լ. Խ. Ծ.

ՎԱՍՍԱՆ
 1915 ԱՄՐԻԼ 720
 ՏՍԻՍՏԱՆԻ ԿՈՄՍՈՒՆԱՐԻ ԿՈՄԻՏԵ

Կարմիր	Կապույտ	Գույնավոր	Գույնավոր
Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր
Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր
Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր
Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր	Գույնավոր

Մասկոթ - Երևան
 1927 թ.


ՎԱՍՍԱՆ



Քարտեզ 52. Վանի Քաղաքամեջի դիրքերը քարտեզ 51-ից:



Պատկեր 53. Այն վայրը, որտեղ ժամանակին Վանի Քաղաքամեջն էր, 2010 թ.:



Քարտեզ 54. 1915–1923 թթ. իրականացված Հայոց ցեղասպանության հիմնական վայրերը:

Այսօր վանեցիների սերունդներից շատերին կարելի է տեսնել Հայաստանում, Եվրոպայի և ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում, որտեղ նրանք մեծ մասամբ հաջողակ են իրենց բազմազան ասպարեզներում: Նրանց բազմամարդ ներկայությունը արդյունքն է իրենց նախորդների հերոսության և անձնագոհության, ովքեր դիմադրեցին օսմանյան բանակին, ու այդ իսկ պատճառով մեծ թվով վանեցիներ կարողացան Ֆեղասպանությունից փրկվել և վերապրել: Նույնը չի կարելի ասել կայսրության տարբեր քաղաքներում ապրող հայ համայնքներից շատերի մասին, որոնք ժամանակ կամ հնարավորություն չունեցան կազմակերպելու դիմադրություն և ինքնապաշտպանություն, և կամ էլ նրանց կազմակերպած ինքնապաշտպանություններն ավարտվեցին պարտությամբ:

1915 թ. մայիսին Անտանտի գլխավոր երեք տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսական կայսրությունը, ԱՄՆ-ի միջոցով հետևյալ հեռագիրն ուղարկեցին Օսմանյան Բարձր դռանը.

Մայիս 24, 1915: Վերջին մեկ ամսվա ընթացքում Հայաստանի քուրդ և թուրք բնակչությունը ներգրավված է եղել հայերի կոտորածներում Օսմանյան իշխանությունների թողություններ և հաճախ նաև օգնությամբ: Այրիլի կեսերին նման կոտորածներ են տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էգինում, Բիթլիսում, Սասունում, Մուշում, Ջեթունում և ողջ Կիլիկիայում: Վանի շրջակա շուրջ 100 գյուղերի բնակիչներ սպանվել են: Քաղաքի հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Միևնույն

ժամանակ Կ. Պոլսում օսմանյան կառավարությունն իր կատաղությունն է թափում անպաշտպան հայ բնակչության վրա: Հաշվի առնելով Թուրքիայի կողմից իրականացված այս նոր հանցագործությունները՝ դաշնակից կառավարությունները հրապարակայնորեն հայտարարում են Բ. Դռանը, որ պատասխանատվության են ենթարկելու ինչպես օսմանյան կառավարության բոլոր անդամներին, այնպես էլ նրա այն գործակալներին, որոնք ներգրավված են հայերի կոտորածներում²⁰:

Փոքր Ասիայի և Արևմտահայաստանի ամբողջ հայ բնակչությունը բռնագաղթեցվեց: Սովորաբար տեղում մնացած տղամարդկանց ձերբակալում ու փոխադրում էին բնակավայրերից դուրս ինչ-որ տարածք, որտեղ նրանք գնդակահարվում էին: Իսկ կանանց ու երեխաներին ոչ պակաս ստորացուցիչ ու ահավոր ճակատագիր էր սպասվում. նրանց պարտադրվում էր հսկայական խմբերով քայլել դեպի հյուսիսային Սիրիայի կիզիչ անապատները: Քչերին հաջողվեց զրկանքներով՝ առանց ջրի և աննդի տեղ հասնել: Նրանց անցնելուց ամիսներ անց ճանապարհներին ու արահետներում կարելի էր տեսնել հազարավոր դիակներ ու կմախքներ: Հայերին կոտորելու համար կիրառվում էին նաև այլ միջոցներ: Այսպես՝ Տրապիզոնում նրանց նստեցնում էին նավակներ, ավերից հեռանալով՝ բոլորին նետում էին Սև ծովի ալիքների մեջ: Երզնկայի մոտակա Կամախի ձորում տարագիր գաղթականներին, պարզապես բարձունքից հրելով, գցում էին արագահոս Եփրատ գետը:

Տարագիրներին ոչ թե տեղափոխում էին, այլ ծրագրում էին ոչնչացնել: Ողջ մնացած տարագիրներին հավաքում էին անապատի հսկայական բացօթյա ճամբարներում, մինչև որ նրանք մահանային ծարավից, քաղցից ու համաճարակներից, ինչը պետական մակարդակով կազմակերպված զանգվածային կոտորածի դրսևորում էր²¹:

Այս անմարդկային վերաբերմունքի լավագույն վկայությունը տվել են ԱՄՆ-ի հյուպատոսները, այդ թվում նաև Խարբերդ-Էլազիզի հյուպատոս Լեսլի Դեյվիսը²²: Ամառվա ամիսներին Լեսլին ձիով շրջում էր իր հյուպատոսության սահմաններում ընդգրկված տարածքում, որտեղ էլ զարհուրելի զանգվածային բնաջնջման վկան եղավ: Նա պատմում է, թե ինչպես հարյուրավոր և հաճախ հազարավոր հայերի դիակները թափվում էին մոտակա ձորերի կամ լճերի մեջ, իսկ անհատ հայեր, որոնց հաջողվել էր սպանությունից ազատվել, ձերբակալվում էին և անվանվում դասալիքներ ու փախստականներ, որոնց սպասվում էր հապճեպ մահապատիժ: Նա պատմում է, որ այս և նման դեպքերի ականատեսն է եղել մինչև 1916 թ.:

Նրանք, ովքեր կարողացան ողջ մնալ տանջալի տարագրությունից, ժողովվում էին բացօթյա համակենտրոնացման ճամբարներում, որոնցից ամենաահավորը Սիրիայի Դեր-Ջորի ճամբարն էր, ուր զոհերին սպասվում էին սով ու ծարավ: Տարագիրներից մի չնչին մասի հաջողեց մոտակա գյուղերի բարի արաբ գյուղացիների օգնությամբ փախչել հարևան երկրներ: Անտիոքի մոտակա Մուսա լեռան շրջակա վեց գյուղերի շուրջ 4000 բնակիչներ, որոնք, դիմելով ինքնապաշտպանության, ապաստանել էին լեռան բարձունքում, հերոսաբար դիմադրեցին օսմանյան բանակի հարձակումներին, մինչև որ Ֆրանսիական երկու ռազմանավ կարողացան նրանց փրկել ու փոխադրել Եփրատ: Այս ինքնապաշտպանության դեպքերի մասին ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը 1930-ականներին հրատարակեց իրական դեպքերի վրա հիմնված իր «Մուսա լեռան 40 օրը» վեպը:

Համակարգված և մանրակրկիտ իրականացված ցեղասպանությունն արդյունք էր կառավարական բարձրագույն շրջանակներում կայացրած որոշումների: Իշխանությունը, որը երիտթուրքերի «Իթթիհազ վե Թերակկի» կուսակցության ձեռքում էր, հիմնականում հետևում էր պանթուրքիզմի ուղեգծին, նպատակներին ու կարգախոսներին: Հայերի զանգվածային կոտորածներն ու էթնիկ զտումը պատահական

և առանձին դեպքը չէին, այլ մաս էին կազմում ամիսներ կամ նույնիսկ տարիներ առաջ մանրակրկիտ քննարկված ու ծրագրված մի ընդհանուր ուղեգծի: Չնայած այն բանին, որ երիտթուրքերը մոբիլիզացրել և օգտվում էին գյուղական խավարամիտ ու ֆանատիկ մոլլաներից ու մուսուլման գյուղացիների ծայրահեղ չքավորությունից, ցեղասպանությունն իրականացվեց ոչ դրա կազմակերպիչների կրոնական անհանդուրժողության պատճառով. եղան անգամ դեպքեր, երբ իսլամ կրոնական ղեկավարությունից ոմանք հայերի ոչնչացման նպատակով կիրառված միջոցների դեմ բողոքներ արձանագրեցին:

Որքան էր սպանվածների ընդհանուր թիվը: Մեծ Բրիտանիայի վիկոնտ Ջեյմս Բրայսը Լոնդոնի Լորդերի պալատում 1915 թ. հոկտեմբերի 10-ին հայտարարեց, որ այս թիվը շուրջ 800 000 է: Սակայն կոտորածները շարունակվեցին 1916 թ. և տևեցին մինչև 1923 թ.: 1918 թ. Հայաստանի վրա թուրքական հարձակումը հազարավոր զոհեր խլեց, և երբ օսմանական բանակը գրավեց Բաքուն, ավելի քան 30 000 հայեր սպանվեցին, և նույնիսկ 1921 թ. բրիտանացի զինվորականը զեկուցում էր, որ Էրզրումում քեմալականները տանջամահ ու սովամահ էին անում հայ բանտարկյալներին, իսկ օսմանցի բանակայինները հայ բանտարկյալներին գործածում էին որպես ավինամարտի թիրախ: Տասնյակ հազարավոր հայ կանաչք ու երեխաներ մահացան նաև սովից ու համաճարակներից:

Ծրագրված ցեղասպանության արդյունքում Օսմանյան կայսրության տարածքում, այսինքն՝ իրենց հայրենիքում ապրող 2 միլիոնից ավելի բնիկ հայ ժողովրդից միայն շուրջ կես միլիոնը վերապրեց՝ փախուստ տալով և ցրվելով աշխարհով մեկ: Տարագիր կանանցից ու աղջիկներից մի մասն առևանգվեց ու պարտադիր կրոնափոխ դարձավ, իսկ մեծամասնությունը կոտորվեց: Այժմ Թուրքիայի Հանրապետությունում ապրում են ավելի քան 100 000 հայեր և հայկական ծագում ունեցողներ, իսկ շուրջ կես միլիոն փրկված հայերի սերունդներին կարելի է տեսնել Ավստրալիայից մինչև Արգենտինա և Բիրմայից մինչև ԱՄՆ: Սակայն ներկայիս Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը հերքում է Յեղասպանությունը՝ այն որակելով կեղծիք, իսկ հայերին մեղադրում թուրք ժողովրդի դեմ կատարված ցեղասպանության համար²³:

Դեպքերին վկա էր նաև գերմանացի զինվորական Արմին Վեգները, ով ցեղասպանության ընթացքի մի մասը լուսանկարել էր²⁴: Մեկ ուրիշ վկա էլ Թավրիզում Գերմանիայի հյուպատոս Վիլհելմ Լիթթենն էր, որն այդ օրերին Բաղդադի և Հալեպի ճանապարհով վերադառնում էր Բեռլին²⁵:

Ռուսական կայսրության անկումը և 1917 թ. վերջերից կովկասյան բանակի ցրվելը ի թիվս այլ գործոնների պատճառ դարձան, որ առաջին հերթին Վրաստանը, ապա նորաստեղծ Ադրբեջան երկիրը և 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանը հայտարարեցին իրենց անկախությունը: 1918 թ. մայիսին օսմանյան բանակը հարձակվել էր Հայաստանի վրա, ու միայն համայն հայության ուժերով և անվեհեր անձնագոհության շնորհիվ էր, որ Էջմիածնից արևելք՝ Սարդարապատի մոտ, նրանց առաջխաղացումը կասեցվեց և թուրքերին չհաջողվեց հասնել Հայաստանի սիրտը՝ Երևան²⁶:

Հայաստանի վիճակն օրեցօր ծանրանում էր և դառնում օրհասական՝ հատկապես պայմանավորված պատերազմի շրջաններից ու կոտորածներից հարյուր հազարավոր ողջ մնացած ու ճողոպրած փախստականների առկայության փաստով, որոնք ապաստանի և սննդի կարիք ունեին: Մեծ պետությունների ճոռոմ խոստումներն ու կարեկցական ճառերը, ցավոք, երբևէ չիրականացան: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջն այդ հարցում ամենամեծ մեղանշողներից էր: Երբ կարիք կար, և պայմանները թելադրում էին, նա հանրության առջև մեծաբանում և սատարում էր հայությանը, իսկ մասնավոր հանդիպումների ընթացքում նույն խնդիրների մասին նրա տեսակետը դառնում էր բացասական:



Քարտեզ 55. Հայաստանի և Թուրքիայի սահմանն ըստ Սևրի դաշնագրի՝ պատրաստված ԱՄՆ նախագահ Ուիլսոնի կողմից 1920 թ.՝ նրա ստորագրությամբ:

Հայկական բարձրավանդակի՝ Մեծ Հայքի արևելյան մասում ապրող հայության մի մասին հաջողվել էր կոտորածներից ճողոպրել՝ ապաստանելով Արևելահայաստանում, որտեղ 1918-ին հիմնադրվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Այստեղ էլ բազմահազար փախստականներին սպասում էին սովն ու համաճարակները: Նրանք, ովքեր կարողացան հասնել Եվրոպա և ԱՄՆ, առաջին շրջանում մի կերպ պահպանեցին իրենց գոյությունը, մինչև աստիճանաբար տեղում հաստատվելը:

Աստիճանաբար Հայաստանի կորցրած հողամասերի մի մասը վերադարձվեց, և 1919 թ. պետությունը սկսեց իրապես աշխատել (տե՛ս քարտեզ 56): Սակայն եվրոպական հաղթանակող պետությունները, Լյուդ Ջորջի գլխավորությամբ, Թուրքիայի հետ պայմանագիր կնքելու գործընթացը կրիայի քայլերով էին առաջ տանում: ԱՄՆ-ի նախագահ Ուիլսոնին պարտականություն էր տրվել որոշելու Հայաստանի և Թուրքիայի սահմանը, և նա այս պարտականությունը կատարեց 1920 թ. նոյեմբերի 22-ին՝ ստեղծվելիք Հայաստան պետության մեջ ընդգրկելով նաև Տրապիզոնի վիլայեթի մի մասը, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծով (տե՛ս քարտեզներ 55 և 56): Նախագահ Ուիլսոնի գծած սահմանները ներառում էին Վանի, Բիթլիսի, Մուշի և Էրզրոմի հայաբնակ շրջանները, որտեղ հայերը ենթարկվել էին ցեղասպանության:




Քարտեզ 56. Հայաստանի Առաջին հանրապետության սահմանները:

Մուգ դեղինով նշված են հյուսիսային շրջանները՝ ըստ Սևրի դաշնագրի: Դեղինով նշված է Կարսի շրջանը, որը կոմունիստական իշխանությունները վերադարձրին Թուրքիային: Բաց դեղին տարածքը՝ սահմանագծված սևով, նույն դաշնագրով որոշված Թուրքիայի սահմանն է, որը երբևէ չիրագործվեց:

Մինչև Անտանտի տերութունները Փարիզի բանակցությունների արդյունքում քաղաքի Սևր շրջանում 1920 թ. ստորագրեցին համաձայն դաշնագիրը, Հայաստանում տիրող պայմաններն էսպես փոխվել էին:


Մուսթաֆա Քեմալը (Աթաթուրքը) արդեն հաջողեցրել էր թուրք ազգայնականներին հավաքել մի ընդհանուր դրոշի տակ և վերակազմակերպել Առաջին համաշխարհայինում պարտություն կրած օսմանյան բանակը: 1920 թ. աշնանը պարտված Թուրքիան կարողացավ իր ցանկությունն իրականացնել՝ հետ գրավելով Կարսը, որով Հայաստանի վիճակը աստիճանաբար դառնում էր օրհասական: Հայաստանի Առաջին Հանրապետությունը ստիպված էր իշխանությունը զիջել կոմունիստներին և խորհրդային կարգերի հաստատումը կասեցրեց Հայաստանի հանդեպ Թուրքիայի ունեցած ծրագրերը: Իսկ Սևրի դաշնագրի որոշումները այդպես էլ չիրագործվեցին:



Քարտեզ 57. Առաջին հանրապետության քարտեզը, որի տարածքներն աստիճանաբար հանձնվեցին հարևանների, Հայաստանի ատլաս, հատոր 2, Երևան, 2008 թ.: Գունվոր սահմանները հատորիս հեղինակին են:

Խորհրդային ուժերը Հայաստանը գրավելուց հետո պատմական Հայաստանի ունեցած հողերի շուրջ մեկ տասներորդի տարածքի վրա հիմնադրեցին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (տե՛ս քարտեզներ 58 և 60): Խորհրդայնացման առաջին ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքներից մի քանի նշանավոր և կարևոր շրջաններ հանձնվեցին հարևան հանրապետություններին ու երկրներին:

Քարտեզ 57-ը դեղինով նշում է Հայաստանի Հանրապետության տարածքը, իսկ կորցրած տարածքները նշված են դրանից առանձնացված՝ տարբեր գույների սահմաններով: Սրանց մեջ են կանաչով շրջափակված Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբեր 2-ի, ինչպես նաև Կարսի 1921 թ. պայմանագրերը, որոնցով Կարսը, Արդահանը, Իգդիրը, Անին և Արարատը հանձնվեցին Թուրքիային:



1920 թ. դեկտեմբերի 4-ին Ադրբեջանի կոմունիստական ղեկավարությունը հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղ-Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը պետք է լինեն Հայաստանի կազմում: Որոշումը հրատարակվեց նաև Հայաստանում 1920 թ. դեկտեմբերի 7-ին, ապա դրա մասին կրկին պաշտոնապես հայտարարվեց 1921 թ. հունիսի 12-ին Երևանում և Բաքվում:

Քարտեզ 58. Խորհրդային Հայաստանը 1928 թ.: Հաջորդ 10 տարիների ընթացքում արևելյան և հյուսիսային սահմաններում որոշ հողամասեր աստիճանաբար «նվիրվեցին» Վրաստանին և Ադրբեջանին (տե՛ս քարտեզ 59):

Սակայն հուլիսի 4-ին Ստալինի մասնակցությամբ Թիֆլիսում կայացած ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նիստում Բաբվի դիրքորոշումը փոխվեց, և հաջորդ օրը հայտարարվեց, որ Լեոնային Ղարաբաղը կմնա Ադրբեջանի վերահսկողության ներքո՝ որպես ինքնավար մարզ²⁷:

Նախիջևանի հարցը լուծվել էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով: Հայաստանի և Ադրբեջանի սահմաններն էլ այնպես գծվեցին ու հաստատվեցին, որ Հայաստանը և Ղարաբաղը ամբողջովին առանձնանան և որևէ ընդհանուր սահման չունենան:

Խորհրդային Հայաստանն այժմ մաս էր կազմում միակուսակցական ԽՍՀՄ-ի: Պետության վերահսկողությունն ամենուր էր, և այլախոհները անձայն անհետանում էին քաղաքական աքսորներում կամ էլ պարզապես զնդակահարվում: Բայց այն մարդիկ, որոնք իրենց հեռու էին պահում քաղաքական և կուսակցական կյանքից և «վտանգավոր» հարցեր չէին բարձրացնում, կարողանում էին գոյատևել և նույնիսկ խաղաղության պայմաններում իրենց կյանքի մակարդակը բարելավել:



Քարտեզ 59. 1985 թ. Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի քարտեզը, որտեղ ապրող հայությունը կտրված էր Հայաստանից: Կապույտով նշված են ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի տարածքները, որոնք 1925–1938 թթ. գրավվեցին հարևան Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների կողմից՝ դրանք կցելով Ադրբեջանին²⁸:



Քարտեզ 60. Երևան քաղաքի հատակագիծը՝ ըստ Թամանյանի, 1932 թ.:

Հայրենական մեծ պատերազմում Հայաստանի հսկայական մարդկային կորուստները (հանրապետության բնակչության մոտ 10%-ը) դարձավ պատճառներից մեկը, որ պատերազմի ավարտին՝ 1945 թ. նոյեմբերին, որոշում ընդունվեց կազմակերպելու սփյուռքահայության ներգաղթը Հայաստան:

Արդյունքում՝ 1946–1948 թթ. մոտ 100 000 հայեր Եվրոպայից ու Միջին Արևելքից ներգաղթեցին Հայաստան:

Այստեղ նրանք հանդիպեցին մեծ դժվարությունների, քաղաքական և տնտեսական ճնշումների և նույնիսկ աքսորի:

Խորհրդային տարիներին մեծ զարգացում ապրեց Հայաստանի կրթությունը, գիտությունն ու արվեստը, կարճ ժամանակ անց ԽՍՀՄ-ում տոկոսային հաշվով Հայաստանն ուներ ամենամեծ թվով արվեստագետներ, երաժիշտներ ու գիտության ոլորտի աշխատողներ:

Լեոնային Ղարաբաղում, սակայն, վիճակն անբողջովին տարբեր էր: Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների կողմից կիրառված հակահայ քաղաքականությունն ու ազգային ճնշումները, ինչպես նաև խիստ վերհսկողությունը պատճառ դարձան բաձրացնելու բողոքի ակիբներ: Արցախի ժողովրդի ճակատագիրը մնում էր անորոշ: Ինքնավար այս մարզի ժողովուրդը, որի 75 տոկոսը հայ էր, պարբերաբար 1963, 1965, 1966 և 1977 թվականներին բազմաթիվ ստորագրություններով խնդրագրեր էր ուղարկել խորհրդային կենտրոնական կառավարությանը իրենց կարգավիճակը փոխելու նպատակով: 1987-ի վերջերին Հայաստանին միանալու շարժումը Հայաստանում և աստիճանաբար սկսեց ձեռք բերել աջակցություն և պաշտպանություն: Մասնավորապես Հայաստանի բնապահպանական խիստ անբարենպաստ վիճակը Երևանում 1987 թ. հոկտեմբերին հանգեցրին բազմամարդ ցույցերի, որոնց ժամանակ հնչեցին նաև Ղարաբաղը Հայաստանին վերամիավորման պահանջի կոչեր:

Այստեղ նախաձեռնությունը վերցրեց Արցախի հայությունը: 1988 թ. փետրվարին Ստեփանակերտում զանգվածային ցույցերի ընթացքում ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդը իր նստաշրջանում Ադրբեջանից առանձնանալու և Հայաստանին միանալու բանաձև ընդունեց: Ինչպես և սպասվում էր, Մոսկվայի ղեկավարությունը մերժեց այդ բանաձևը:

Հայաստանում իր հերթին մինչև մեկ միլիոնի հասնող բազմություններ ցույցեր տեղի ունեցան: Սակայն հակադարձ վայրագությունները չուշացան: Փետրվարի վերջին օրերին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում բնակվող հայությունը վայրագ դաժանությունների և սպանությունների թիրախ դարձավ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 26 հայ մարդ սպանվեց, ըստ ոչ պաշտոնական տվյալների՝ շատ ավելի՝ մինչև մի քանի հարյուր: Իշխանություններն այդպիսով սպառնացին, որ հայերը պետք է վերջ տան իրենց պահանջներին, այլապես կկոտորվեն: Հայաստանում և Արցախում մինչև 1988 թ. վերջերը Արցախի հետ միացման ցույցերն ու գործադուլները շարունակվեցին:

1988 թ. ամռանը Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահությունը հայտարարեց, որ Լեոնային Ղարաբաղն իրավական կարգավիճակը փոխելու իրավունքը չունի: Այսպիսով՝ հակառակ Գորբաչովի «վերակառուցման և հրապարակայնացման» կարգախոսի և հայտարարությունների՝ սահմանների փոփոխությունը, եթե նույնիսկ դա արվում էր Ստալինի նախկին սխալն ուղղելու նպատակով, թույլատրելի չէր: Երբ Լեոնային Ղարաբաղը որոշեց իրեն վերանվանել իր հնագույն՝ Արցախ անվանմամբ, և Մոսկվայում 1988 թ. նոյեմբերի 18-ին դատարանը Սումգայիթի մարդասպաններից մեկին մեղավոր ճանաչեց, հայության հանդեպ Ադրբեջանի վայրագություններն էլ ավելի սաստկացան:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ուժեղ երկրաշարժը, որի էպիկենտրոնն էր Սպիտակը, ավերեց Հայաստանի հյուսիսային շրջանը: Արդյունքում զոհվեցին շուրջ 25 000 և անօթևան մնացին կես միլիոնի չափ հայորդիներ: Ադետը համաշխարհային կարեկցության և ուշադրության ալիք բարձրացրեց, և բազմաթիվ երկրներ սկսեցին Հայաստանին ցուցաբերել տարբեր տեսակի բարեգործական՝ նյութական և բարոյական օժանդակություն: Մոսկվայի և ԽՍՀՄ-ի վերաբերմունքը աղետից փրկվածների հանդեպ լավագույն դեպքում անկազմակերպ էր ու անպատեհ:

1989 թ. հունվարից մինչև նոյեմբեր Ղարաբաղը ղեկավարում էր Մոսկվան, որի արդյունքում տեղում համեմատական խաղաղություն հաստատվեց: Բայց երբ Ղարաբաղը վերադարձվեց Ադրբեջանի վերահսկողությանը, իշխանությունների զինյալ ճնշումները հայ բնակչության նկատմամբ սաստկացան, դրան հավելյալ՝ Ադրբեջանը Հայաստանի և Արցախի սահմանները փակեց՝ նրանց դնելով տնտեսական շրջափակման մեջ: Եվ դա կատարվեց այն ժամանակ, երբ Հայաստանն իր ավերված տարածքները վերականգնելու ու վերաբնակեցնելու համար կարիք ուներ ստանալու համաշխարհային մակարդակով ուղարկված օգնությունները: Ադրբեջանի տրամադրությունը և ծրագիրը դրսևորվեցին

նաև այն բանում, որ 1990 թ. հունվարին Բաքվի տեղաբնակ մի քանի հարյուր հայերի սպանեցին և ամբողջ հայ համայնքին քաղաքից արտաքսեցին:

Այս բարդ իրավիճակին ավելացան շուրջ 400 000 հայերի պարտադիր և անմիջապես Ադրբեջանից հեռանալը, Հայաստանից էլ՝ ադրբեջանցի բնակիչների հեռանալը:

«Վերակառուցման» տարիներին՝ մինչև 1990–1991 թվականները, Հայաստանում կոմունիստները կորցրին իշխանությունը, և Հայաստանի ու Արցախի դեմ դուրս եկան Բաքու–Մոսկվա առանցքի միասնական ուժերը՝ առաջին հերթին էթնիկ գտում կատարելով Հյուսիսային Ղարաբաղի Շահումյանի շրջանում, որի արդյունքում շուրջ 20 000 հայեր լքեցին իրենց գյուղերը և դարձան փախստականներ:

1991 թ. Հայաստանը հայտարարեց իր անկախությունը, և նույն տարվա դեկտեմբերին Խորհրդային Միության գոյությունը վերջնականապես դադարեց, որի փոխարեն հապճեպ ստեղծվեց «Անկախ պետությունների համագործակցություն» կոչված կամավոր միությունը (ԱՊՀ): Նախկին Խորհրդային Միության երկրների ենթակառուցվածքները կործանվեցին, և բոլորի տնտեսություններն ամբողջովին քայքայվեցին: Առաջացած վառելիքի պակասը և հաջորդ մի քանի ցրտաշունչ ձմեռները պատճառ դարձան զանգվածային ծառահատման, որը մինչ մեր օրերը դեռ նկատելի է: Միայն 1994–1995 թթ. Մեծամորի ատոմակայանի վերաբացումը կարողացավ ժողովրդին բավարար էլեկտրաէներգիա մատակարարել և վառելիքի խնդիրը մասամբ լուծել:

1992–1993 թթ. Հայաստանի և Ադրբեջանի պատերազմը դեռ շարունակվում էր: 1992 թ. մայիսի 8–ին Արցախի բանակն ազատագրեց Շուշին, որտեղից Ադրբեջանի բանակը գրադ տեսակի ուսական հրթիռներով ուժեղացրեց իր Ստեփանակերտը, իսկ զինապահոցն էր Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց հայկական եկեղեցին: Արցախի բանակը նաև ազատագրեց Լաչինի միջանցքը, որով ապահովվում էր Հայաստանի և Արցախի ճանապարհային կապը:

1993 թ. ապրիլ–մայիսին Ադրբեջանի բանակը ներքին հակասությունների պատճառով փլուզվեց և Բաքվում իշխանության գլուխն անցան Սուրաթ Հուսեյնովը և Հեյդար Ալիևը: Հայկական զորքերն առիթից օգտվեցին՝ ազատագրելով ամբողջ Լեռնային Ղարաբաղը և շրջակա տարածքները մինչև Դաշտային Ղարաբաղ:

1994 թ. համաձայնեցված զինադադարը մինչ օրս ուժի մեջ է, սակայն տարածաշրջանի ապագա իրավիճակի վերաբերյալ վերջնական համաձայնության գալու բանակցությունները մնացել են ապարդյուն: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) միջամտությամբ կազմակերպված բանակցությունների իրավիճակը մնում է անփոփոխ, քանի որ Ադրբեջանի ղեկավարությունը պնդում է, որ Արցախը պետք է առանց նախապայմանի վերադարձվի Ադրբեջանին, ինչը նշանակում է Արցախի հայության բնաջնջումը:

Արցախի հակասությունների լուծման համար 2007 թ. ներկայացված և կիրառված Մադրիդյան նախաձեռնությունը հիմնված է միջազգային երեք սկզբունքների վրա՝ ազգերի ինքնորոշման իրավունք, տարածքների անձեռնմխելիություն և զինվորական ուժերի հեռացում: Այս նախաձեռնության փոփոխված տարբերակները 2010 թ. սկսած դրվել են սեղանին: Ութ գերուժերի 2010 թ. հուլիսի հանդիպումից հետո ԵԱՀԿ–ի, ԱՄՆ–ի, Ռուսաստանի Դաշնության և Ֆրանսիայի նախագահները ներկայացրին իրենց միացյալ առաջարկը Ղարաբաղի խնդրի լուծման համար, որը դարձել է պարբերաբար կրկնվող երևույթ:



Քարտեզ 61. 2015 թ. Հայաստանը և Արցախի Հանրապետությունը, ներառյալ ազատագրված տարածքները:

Այս տարիների ընթացքում Ադրբեջանի Հանրապետության իշխանությունները և նախագահ Ալիևը հայտարարում են, որ Հայաստանը ստեղծվել է ադրբեջանական պատմական հողերի վրա, որոնք պետք է վերադարձվեն Ադրբեջանին: Նրանք ամբողջովին մոռանում են, որ Արաքսի հյուսիսային ափերին Ադրբեջանի Հանրապետություն անունը կրող երկիրը ծնվել է 1918 թ., և նախկինում այդ երկիրը գոյություն չի ունեցել²⁹: Մինչդեռ Հայաստանը ներկա է 2600 տարեկան առաջին աշխարհացույց քարտեզում, որը կարելի է տեսնել սույն աշխատությունում (տե՛ս քարտեզ 2):

2008 նախագահական ընտրությունների արդյունքներից դժգոհողները զանգվածային ցույցեր էին կազմակերպել, որոնց գոհ գնացին ՀՀ 10 քաղաքացիներ:

2015 թ. Հայաստանը և աշխարհի համայն հայությունը նշեցին Օսմանյան կայսրության տարածքում 1915–1923 թվականներին կատարված ցեղասպանության՝ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը, որի ընթացքում Մեծ Հայքի, այսինքն՝ պատմական՝ Արևմտյան Հայաստանի տարածքում բնակվող հայության մեծ մասը ոչնչացվեց:

2015 թ. դեկտեմբերին հանրաքվեով ընդունվեց նոր սահմանադրություն, որը հիմնականում նախատեսում է անցում կիսանախագահականից խորհրդարանական կառավարման համակարգի:

2018 թ. ապրիլին նոր Սահմանադրության հիման վրա Ազգային ժողովն ընտրեց ՀՀ չորրորդ նախագահին՝ Արմեն Սարգսյանին, իսկ վարչապետ՝ նախկին նախագահ Սերժ Սարգսյանին: Վերջինիս նշանակումը բուռն զայրույթ առաջացրեց ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնության շրջանում, քանի որ Սերժ Սարգսյանը նախապես հայտարարել էր, որ այլևս ոչ մի պետական պաշտոն չի ստանձնելու: Այս բոլորի արդյունքում եղավ այն, որ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը հայտարարեց «Թավշյա հեղափոխություն», դեկավարեց ժողովրդական շարժումը, ինչի հետևանքով Ս. Սարգսյանը հրաժարական տվեց, իսկ Խորհրդարանը մայիսի 8-ին վարչապետ ընտրեց Փաշինյանին, ով առաջնային հռչակեց օրենքի գերակայությունը, ժողովրդավարության սկզբունքները և պայքարը դրամաշորթության դեմ:

Այժմ, ավելի քան 100 տարի անց, Հայաստանն անկախ երկիր և պետություն է, որը շնորհիվ հայ ժողովրդի իր տեղն է գրավել միջազգային երկրների ընտանիքում և աստիճանաբար ճանաչվել է որպես արվեստի, երաժշտության, մշակույթի և գիտության կենտրոն:

Հանրահայտ ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանը 1935 թ. իր հարցազրույցում հայ ժողովրդի դիմադրողականության վերաբերյալ ասել է հետևյալը.

Կուզեի տեսնել աշխարհում որեւէ ուժ, որ կկործանի այս ժողովրդին, անկարելուր մարդկանց այս փոքր ցեղը, որի պատմությունն ավարտված է, պատերազմները՝ կռված ու պարտված, շինությունները՝ փլուզված, գրականությունը՝ չկարդացված, երաժշտությունը՝ չլսված, եւ աղոթքները՝ լռած:

Դե կործանեք: Ասենք թե նորից 1915-ն է, իսկ աշխարհում՝ պատերազմ: Կործանեք Հայաստանը: Տեսեք՝ կտուազվի: Տեսե՛ք՝ նորից չեն ապրի, նորից չեն խնդա: Տեսե՛ք՝ նրանց ցեղը չի հառնի, երբ քսան տարի հետո երկու հոգի հանդիպեն գարեջրատանն ու ծիծաղեն ու խոսեն իրենց լեզվով: Դե՛, տեսե՛ք՝ մի բան կկարողանանք անել դրա հետ: Տեսե՛ք՝ կկարողանանք արգելել, որ նրանք ծաղրեն աշխարհի մեծ-մեծ գաղափարները, շան տղերք, որ երկու հայ խոսեն աշխարհում, դե փորձե՛ք կործանել նրանց³⁰:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

¹ Richard Frye, *The Cambridge History of Iran, Vol. 4*. Cambridge: Cambridge University Press, 1975.

ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

- ² Արտակ Մովսիսյան, *Հայոց պետականությունը, 5000 և 20 տարեկան*: Երևան, ԵՊՀ, 2011 թ.:
- ³ Strabo, *Geography, Books 10–12*, translated by Horace Leonard Jones, Loeb Classical Library. Cambridge: Harvard University Press, 2000, pp. 185–341.
- ⁴ Ռուբեն Գալսեան, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ*: Երևան, Փրինթինգոն, 2005 թ., էջ 18–20, 113–133:
- ⁵ Macrobius, Ambrosius Aurelius Theodosius – *Commentary on the Dream of Scipio* – Translated with an introduction and notes by William Harris Stahl, New York: Columbia University Press, 1952. Տես նաև Ռուբեն Գալսեան, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Երևան, Փրինթինգոն և Լոնդոն, «Կոմիտաս» ինստիտուտ, 2007, էջ 23–24:
- ⁶ Ռուբեն Գալսեան, անդ, էջ 29–30:
- ⁷ Suzanne Lewis, *The Art of Matthew of Paris*. Aldershot: Scholar Press & Cambridge University Press, 1987, p. 302.
- ⁸ Matthew of Paris, *Chronica Maiora*, MS copy. London: British Library, MS Royal 14.C.VII.
- ⁹ Walter Rosien, *Die Ebstorfer Weltkarte*. Hannover: 1952.
- ¹⁰ Տես տեսագրություն. Youtube – *Casanova: The Great Chameleon*, Թաններ Լ. Բոյաջյան, 2013:

ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ

- ¹¹ Ina Baghdiantz–McCabe et al., *Slaves of the Shah. New Elite in Safavid Iran*, London: I.B Tauris, 2004.
- ¹² Կարապետյան Սամվել, *Արցախի և Սյունիքի մեղիքական ապարանքները*, Երևան, ՀՃՈՒԿ, 2001:
- ¹³ Ըստ Ռուբերտ Միրզեանի՝ թուրքերը Հայաստանն անվանում են Թուրքոմանիա: Տես Միրզեանի «Մեծ Հայքի քարտեզը», Ռուբեն Գալսեան, նշված աշխ., 2005, էջ 182:
- ¹⁴ Katib Çelebi, *Cihan–Numa*, Մութեֆերիկյայի խմբագրությամբ: Istanbul: Boyut, 2013.
- ¹⁵ Ռուբեն Գալսեան, նշված աշխ., 2005, էջ 172–173:

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՅՍՈՐ

- ¹⁶ Մանրամասի համար տես Arthur Tsutsiev, *Atlas of the Ethno–Political History of the Caucasus*, London: Yale University Press, 2014.
- ¹⁷ Ըստ Ռուբեն Սահակյան, Կոնստանտին Խուրավերդյան, *Հայոց ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո*: Երևան, «Հակոբ Մեղապարտ» հրատ., 1995, էջ 23–ի, զորակոչված հայերի թիվը շուրջ 60 000 էր, իսկ ըստ Մարշալ Լանգի՝ հասնում է շուրջ 250 000–ի: Տես David Marshall Lang, *Minority Rights Group Report 32, The Armenians*. London: MRG Publication, 1981, 8.
- ¹⁸ Raymond H. Kevorkian, *The Armenian Genocide*. London: I.B.Tauris, 2011.
- ¹⁹ Christopher J Walker, *Armenia. The Survival of a Nation*, London: Croom & Helm, 1980.

- ²⁰ Տե՛ս հայերեն Վիքիպեդիա. *Օսմանյան բանակի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ*:
- ²¹ *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ*: Փաստաթղթերի ժողովածու 3 հատորով, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012: Տե՛ս նաև Raymond Kevorkian, London: IB Tauris, 2011.
- ²² Leslie A. Davis, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide*. New-York and Athens: Aristide Garatzas. 1989.
- ²³ Geoffrey Robertson, *An Inconvenient Genocide*. London: Biteback, 2014:
- ²⁴ Armin Wegner, *Die Austreibung des armenischen Volkes in die Wüste: Ein Lichtbildvortrag*. Berlin: Wallstein, 2010.
- ²⁵ Wilhelm Litten, *Persische Flitterwochen*. Berlin: Joseph Stilke, 1925.
- ²⁶ Հարություն Թուրշյան, *Սարդարապատի ճակատամարտը*: Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
- ²⁷ Ռուբեն Գալսյան, նշված աշխ., 2010, էջ 163–164:
- ²⁸ Մանրամասի համար տե՛ս Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան և Գեղամ Բադալյան, *Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին*: Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015:
- ²⁹ Ադրբեջանի նման վերաբերմունքի և դրա դրդապատճառների մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Ռուբեն Գալսյանի երկու մենագրությունները, *Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան. Կեղծիքներ և փաստեր*, Լոնդոն. «Կոմիտաս» ինստիտուտ և Երևան, Փրինթինգո, 2010, ինչպես նաև *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարություններ. Պատմաաշխարհային և քարտեզագրական հետազոտություն*: Երևան, Զանգակ, 2017:
- ³⁰ Վիլիամ Սարոյան, *Inhale, Exhale: The Armenian and the Armenian*. New York: August 1935. Տեքստը Սարոյանը ձայնագրել է 3 սկավառակի վրա՝ հրատարակված 1973 թ. Listening Library-ի կողմից, որն ունի *Վիլյամ Սարոյանը խոսում և ընթերցում է իր շարադրանքներից (Here's William Saroyan Reading His Own Stuff and Talking)*:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբխազիա – 23, 27, 43
Ադրբեջան – 7, 10–13, 34–36, 55, 57, 59, 60, 62, 73, 77, 78, 70, 82, 86
Ադրբեջանի Հանրապետություն – 8, 10, 13, 82
Ադանա – 66
Ադիաբենե – 21
Ալաշկերտ – 64
Ալբանիա – տե՛ս Ադվանք
Ալեքսանդրապոլ – 77
Ալեքսանդրիա – 23
Ալիև, Հեյրաբ – 81, 82
Ալֆոնսո 5–րդ – 42
Ադիամար – 31
Ադ–Կոյունլու – 41
Ադվանք – 7, 11–13, 20, 23, 26, 27, 30, 35, 36, 52
Ամերիկայի Միացյալ Նահանգներ կամ ԱՄՆ – 8, 42
Ամասերդավ – 55
Ամիդ – 35
Այգեստան – 67
Անանիա Շիրակացի – 27
Անատոլիա – 10, 11, 15, 44
Անի – 31, 33, 36, 77
դ՛Անվիլ, Ժան Բատիստ – 8, 54
Անտանտ – 81, 71, 76
Անտիոք – 72
Ատրեստան – 18, 19, 22, 23, 26
Ավարայր – 86
Ավետայց երկիր – 40
Ատրպատական կամ Իրանի Ադրբեջան – 10, 13, 15, 27, 30, 33–35, 55, 60, 62
Արաբական խալիֆայություն – 31, 34
Արաբիա – 51
Արան, նաև տե՛ս Ադվանք – 13, 14
Արարատ – 15, 24, 29, 32, 29–41, 43, 51, 58, 60, 77
Արաքս – 10, 11, 13, 30, 35, 36, 39, 47, 55, 60, 62, 82
Արգենտինա – 73
Արդաբիլ – 60, 64, 77
Արդահան – 60, 64, 77
Արդվին – 10
Արծրունի – 23, 27, 43
Արճեշ – 35
Արմենական կոաակցություն – 64
Արմինիա – 15–17, 34, 49, 64, 73, 83
Արցախ – 8, 9, 13, 15, 48, 56, 61, 62, 77, 80–82, 85
Արևելյան Ադրբեջան – 13
Արևելյան Հայաստան կամ Արևելահայաստան – 47
Արևմտյան Ադրբեջան – 13
Արևմտյան Հայաստան կամ Արևմտահայաստան – 82
Ապշերոն – 59
Աֆրիկա – 11, 23, 25, 29–31, 38
Բաբելոն – 7, 16–18, 29
Բագրատունի – 31, 33
Բավսի դպրոց – 34
Բաղդադ – 44, 73
Բայրոն, Լորդ – 55
Բանկ Օտտոման – 65
Բաքու – 11, 59, 65, 73, 77, 78, 81
Բաուշ, Ֆիլիպ – 24
Բեհիսթուն – 7, 16, 17
Բեռլին – 63, 73
Բերկիր – 35
Բելիսարիոս – 30
Բիթ–Յակինուս – 18
Բիթլիս – 32, 62, 71, 75
Բիրմա – 47, 73
Բյուզանդիոն – 30, 31, 45
Բյուզանդական կայսրություն – 10, 19
Բոնսինյորի, Ստեֆանո – 45
Բորջիա – 41
Բրայս, Ջեյմս – 73
Բրիտանիա – 25, 40, 48, 62, 73
Բրիտանական կայսրություն – 48, 71
Գալաթեա – 23
Գալիլեա – 29
Գալլիա – 25
Գալչյան, Ռուբեն – 8, 10–13, 85, 86, 92
Գանձակ, տե՛ս Ելիզավետպոլ – 58, 60
Գերմանիա – 40, 44, 73
Գյուլիստան – 57
Գյումրի – 80
Գրիբոյեդով – 10
Գրիգոր Լուսավորիչ – 24
Գրիգոր Պիճակ – 37
Դադարշի – 17
Դաշտային Ղարաբաղ – 81
Դառը ջրեր – 18
Դավիթ Բեկ – 48
Դարեհ Մեծ Արքա – 17, 18
Դե լա Ռյու, Ֆիլիպ – 30, 51
Դեվլիս, Լեսլի – 72
Դեր–Ջոր – 72

Դերբենդ – 30, 36 44, 56, 57
Դերի – 18
Դերջան – 71
Դիարբեքիր – 10, 52
Դիզրայելի – 63,
Դինք, Հրանա – 9
Դյու Վասալ, Ֆիլիպ – 51
Դոն – 29, 31, 38
Դվին – 35, 36
Դուպերտ, Անջելինո – 7, 39

ԵԱՀԿ – 81

Եգիպտոս – 10, 15, 18, 29, 39,
72

Եթովպիա – 25

Ելիզավետպոլ – 59, 61

Երկրային դրախտ – 24, 31, 38

Եվրոպա – 12, 19, 23, 27, 29,
31, 38, 41, 43, 44, 47, 55,
65, 71, 75, 79, 81

Երզնկա – տես Էրզնջան – 15, 72

Երոսադեմ – 12, 29, 32, 37, 38,
40, 41, 44

Երևան – 8, 12, 13, 51, 53, 55,
57, 58, 60, 61, 63, 73, 76,
77, 79, 80, 85, 86, 92

Եփրատ – 10, 15, 18, 25, 39, 72

Զանգակ – 10, 86

Զանգեզուր – 62, 77

Զեյթուն – 71

Էբսթորֆյան քարտեզ – 7, 41

Էգին – 71

Էրզինջան – 15

Էմին, Հոսսեփ – 48

Էջմիածին – 65, 73

Էրզրում – 52, 62, 66, 71, 73,
75

Էրիսմենա – 45

Էրիվան – 59

Էրմենիյե – 16, 41, 50

Էքս ան Պրովանս – 38

Թալիշ – 58

Թամանյան, Ալեքսանդր – 79

Թավրիզ – 44, 73

Թիֆլիս – 56, 61, 64, 78,

Թոնիս – 11

Թուրքական Արմենիա – 49

Թուրքական կայսրություն – 13,
48, 49

Թուրքիա – 8–10, 13, 15, 51,
52, 64–66, 68, 72–77, 86

Թուրքիայի Հանրապետություն –
13, 15, 73

Թուրքմենչայ – 57, 59

Թուրքոմանիա – 149, 51, 85

Ժնև – 64

Իբերիա – 20, 22

Իբն–Խալդուն – 11

Իգդիր – 60, 77

Իզրիսի – 7, 36

Իթիֆհազ վե թերեկլի
կոասակցություն – 65, 72

Իսթախրի – 7, 33

Իսիդոր եպիսկոպոս – 7, 32, 38

Իսլանդիա – 25, 34

Իտալիա – 30, 44

Իրան – 8–10, 34, 36, 45, 47,
51–53, 55, 57–62

Լազարև – 60

Լաչին կամ Բերձոր – 81

Լեարդո – 41

Լեհաստան – 33

Լենինական կամ Գյումրի – 80

Լեոնային Ղարաբաղ – 8, 13, 15,
77, 78, 80, 81

Լիբենացի Բեստուա – 31

Լիթթեն, Վիլհելմ – 73

Լլոյդ Ջորջ – 73, 75

Լոնդոն – 10, 12, 13, 18, 27,
40, 50, 65, 73, 85, 86

Լոփ – 10, 45, 57

Լորիս–Մեխիբով – 60

Լևոն 6–րդ, Կլիկիո – 39

Խարբերդ կամ Էլազիզ – 10, 15,
72

Խլաթ – 50

Խերանյան, Մկրտիչ – 8, 68

Խոր Վիրապ – 84

Խորհրդային Հայաստան – 15, 77,
78

ԽՍՀՄ – 78–80

Կադրախա – 21

Կազանովա, Զիակունո – 45

Կախեթիա – 55

Կաղզվան – 64

Կապադոկիա – 19, 21, 22, 23,
31

Կասպից ծով – 19–21, 23, 34,
35, 42, 43, 50

Կարա–Կոյունլու – 41

Կարապետյան, Սամվել – 85

Կարթագեն – 25

Կարմիր ծով – 32

Կարս – 58, 60, 63, 64, 75–78

Կենտրոնական Ասիա – 15

Կեսարիա – 29

Կիլիկիա – 15, 21, 36–39, 50,
66, 71

Կիլիկիայի հայկական
թագավորություն – 7, 15, 36–
39, 43, 45

Կիկերոն – 25

Կիպրոս – 63

Կողմա Ալեքսանդրիացի – 27

Կոլլքիս, տես Աբխազիա

Կոմագենե – 21

Կոմիտաս Ինստիտուտ – 10, 12,
85, 86

Կոստանդնուպոլիս – 23, 29, 47,
55, 65, 85

Կովկաս – 7, 8, 10–12, 15, 31,
32, 34–36, 41, 43, 44, 48,
52, 56–58, 61, 66, 78, 85

- Կուր – 30, 35
- Հաբբան – 18
- Հաբեթ – 24
- Հալեպ – 44, 66, 73
- Հանովեր – 41
- Հայ հեղափոխական
դաշնակցություն – 41
- Հայկական բարձրավանդակ – 10,
15, 39, 75
- Հայկական լեռնաշխարհ – 10,
15, 39
- Հայաստանի առաջին
հանրապետություն – 75
- Հայաստանի Հանրապետություն –
15, 77
- Հարավային Կովկաս – 7, 11, 74
- Համադան – 30
- Հարմինոպա – 17
- Հեթումյաններ – 36
- Հեռավոր Արևելք – 47
- Հերակլես – 31
- Հերեֆորդի քարտեզ – 41
- Հերոդոտոս – 7, 19
- Հիլմի, Իբրահիմ – 72
- Հյուսիսային Աֆրիկա – 11
- Հնդկական օվկիանոս – 33
- Հնդկաստան – 25, 40, 47
- Հոլանդիա – 40, 48
- Հոնդուրա – 48, 49
- Հոմ – 21, 23, 30
- Հունգարիա – 33
- Հունաստան – 44
- Հուստինիանոս Առաջին – 7, 30
- Ղաջարներ – 57
- Ղարաբաղ – 8, 13, 15, 58–61,
65, 77, 78, 80, 81
- Ղարաբաղի լեռներ – 43
- Ղարադաղ – 60
- Ղարաչեղաղի – 8, 60
- Ղուբա – 59
- Մաթթիու Փարիզեցի – 7, 40
- Մալաթիա – 10, 15, 62
- Մակրոբիոս, Ամբրոզիոս
Թեոսոփիոս – 7, 25
- Մարաստան – 19, 20, 26, 27
- Մեծան – 38
- Մելիտենե – 21
- Մեծ Բրիտանիա – 62. 63. 71. 73
- Մեծ Հայք – 7, 9, 10, 15, 21–24,
26 27, 29, 30, 38, 39, 42,
43, 49, 50, 51, 52, 75, 82,
85
- Մեծամոր – 80
- Մեսրոպ Մաշտոց – 26
- Մերկատոր, Ջերարդուս – 7, 43,
48, 49,
- Մըրրի, Ջոն – 19
- Միլլեր, Կոնրադ – 19
- Միջերկրական ծով – 7, 19, 21,
29
- Միջին Արևելք – 7, 22, 55, 79
- Մխիթար Սեբաստացի – 55
- Մխիթարյան միաբանություն – 55
- Մխիթարյան, Վարդան – 8
- Մյուլլեր, Կառլ – 19, 21
- Մյուլլեր–Սիմոնիս – 8, 67
- Մյունխեն – 8, 32
- Մոսկվա – 78, 80, 81
- Մովսես Խորենացի – 27
- Մորիկ կայսր – 31
- Մոսոլ – 44
- Մովսեֆերրիկա, Իբրահիմ – 52, 85
- Մուղան – 53
- Մուշ – 9, 71, 75
- Մուսա լեռ – 72
- Նազարեթ – 29
- Նախիջևան – 36, 47, 51, 57–60,
77, 78
- Նեղոս – 29, 31, 33, 38
- Ներսես – 30
- Նյուտոն, Իսահակ – 27
- Նոյ նահապետ – 24, 39
- Նոյյան տապան – 29, 32, 39–41,
43
- Նոր Ջուղա – 47, 55
- Նովսի – 59
- Շահ Աբբաս – 47, 48, 81
- Շահ Թահմասպ – 48
- Շահումյանի շրջան – 81
- Շամսի – 36, 45, 56, 57, 61
- Շամխոր – 36
- Շաքի – 57
- Շիրազ – 44
- Շիրակ – 57
- Շիրվան – 13, 36, 43, 51–53,
56, 58, 60, 62,
- Շոշ – 44
- Պաղեստին – 52
- Պամիլիկա – 31
- Պապուս Ալեքսանդրացի – 27
- Պարթևաստան – 25
- Պարսկական կայսրություն – 8,
30, 49, 52
- Պաֆլագոնիա – 23
- Պետրոս Առաջին – 48
- Պոնտոս – 22
- Պտղոմեոս – 7, 23, 27
- Ջենովա – 37
- Ջևգեթ Բեյ – 67
- Ջուղա – 10, 47, 55
- Ռեգա Էնայաթոլլահ – 13
- Ռոժե Երկրորդ – 36
- Ռուբինյաններ – 36
- Ռուսական կայսրություն – 8, 10,
51, 55, 62, 71, 73
- Ռուսաստան – 8–10, 44, 448, 53,
57–60, 63, 65, 81
- Սաբալան լեռ – 34
- Սան Ստեֆանո – 60, 62, 63
- Սասանյան կայսրություն – 29–31

- Մասանյան Պարսկաստան – 26
Մասուն – 8, 64, 71
Մարգայան, Արմեն – 83
Մարգայան, Սերժ – 83
Մարդարապատ – 73, 76
Մարոյան, Վիլյամ – 83
Ս. Ալբան – 40
Ս. Ամենափրկիչ – 47
Ս. Բարդուղիմեոս – 41
Ս. Խաչ – 31
Ս. Ղազար – 45, 55
Սեմ – 24
Սեֆյաններ – 52
Սիրիա – 21, 23, 44, 72
Սիա – 37, 50
Սիլիպիոն – 25
Սյունիք – 47, 48, 62, 85
Սոցիալ դեմոկրատ հնչակյան
կուսակցություն – 64
Սպահան – 47
Ստալին – 78, 80
Ստամբուլ – 8, 34, 62, 65, 66
Ստրաբոն – 7, 12, 20
Ստեփանակերտ – 80, 81
Սուլթան – 65
Սումգայիթ – 80
Սուրմալու – 58, 60
Սիլյուսթ – 65
Սևան – 10, 15, 45, 49, 62
Սև ծով – 20, 33, 39, 42, 43, 64,
72
Սևր – 7, 74–76
Վան – 7, 08, 50, 54, 67, 68, 70,
71, 75
Վանա լիճ – 34, 31, 36, 50, 51,
62
Վանի քաղաքամեջ – 70
Վասպուրական – 31
Վենետիկ – 8, 37, 42, 45, 55
Վերչելի – 41
Վերֆել, Ֆրանց – 72
Վիրք – 20, 22, 23, 26, 27, 30
Վիվալդի, Անտոնիո – 45
Վրաստան – 12, 43, 52, 53, 55,
57, 59, 61, 62, 73, 77
Տավրոսյան լեռներ – 19, 45
Տիգրան Մեծ կամ 2–րդ – 7, 15,
21, 45
Տիգրիս – 39
Տնատունկյան – 45
Տրապիզոն – 44, 72, 75
Տրդատ 3–րդ – 24
Տրոյա – 44
Ուիլսոն, Վուդրո – 8, 25, 74
Ուինսթոն, Ուիլյամ և Ջորջ – 27
Ուկրաինա – 33
Ուաքեր, Քրիստոֆեր – 66
Ուրարտու կամ Ուրաշտու – 15,
17, 18
Փամբակ – 59
Փաշինյան, Նիկոլ – 83
Փարիզ – 8, 24, 39, 51, 65, 75
Փափազյան Երվանդ – 13
Փոքր Ասիա – 10, 15, 20, 26,
29, 31, 33, 67, 72
Փոքր Հայք – 7, 15, 23, 26, 29,
30, 39, 43, 50
Փոքր Մարաստան – 13, 22
Փոլոզիա – 31
Քամ – 24
Քաղդեա – 29
Քաղկեդոն – 31
Քավալի, Ֆրանչեսկո – 45
Քարթվեկի – 55
Քեմալ, Մուսթաֆա (Աթաթուրք) –
76
Քերմանշահ – 17
Քյաթիբ Չելեբի – 7, 50
Օլթի – 64
Օսմանյան Բարձր դուռ – 71
Օսմանյան կայսրություն – 9, 13,
44, 48, 49, 53, 56, 58, 60,
62–67, 73, 82
Օտենդ ընտանիք – 53
Օրի, Իսրայել – 48
Օրտելիոս, Աբրահամ – 7, 44
Օբսֆորդ – 36
Ֆլորենցիա – 7, 41, 45
Ֆրա Մաուրո – 7, 41–43
Ֆրանսիա – 38, 39, 65, 71, 81

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ
Ակնարկ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Հանակարգչային ձևավորումը՝ Ռուբեն Գալչյանի
Հանակարգչային էջադրումը՝ Ժագ Թովալազյանի
Վերատուգող սրբագրիչ՝ Նվարդ Փարսադանյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60×90 1/8
Թուղթը՝ կավճապատ: Ծավալը՝ 11,5 տպ. մամուլ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+374 10) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak



1918-1920 թթ. Օսմանյան կայսրության պարտությունից հետո, Անտանտի ուժերի կողմից նախագիծ կար կայսրության տարածքը բաժանելու մի քանի նորաստեղծ երկրների: Թուրքիան պետք է անվանվեր Անատոլիա, իսկ Զմյուռնիան նոր երկրներից էր: Ստեղծվելու էին նաև Հայաստանը, Միջագետքը և Պաղեստինը, նաև վերականգնվելու էր Սիրիան: Վերի քարտեզը վերցված է Զիկագոյի ամերիկյան «Քրան» քարտեզագրական ընկերության 1920 թ. հրատարակած «Արդի աշխարհի տեղեկատվական ատլաս»-ից, որի խորագիրն է «Ասիայի նոր երկրները»:

ՌՌԻԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

Ծնվել է Թավրիզում՝ Մեծ եղեռնին Վանից տարագիր գաղթականների ընտանիքում, որոնք Թավրիզ էին հասել Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհով: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կրթաթոշակ է ստացել՝ սովորելու Բրիտանիայի Բիրմինգհեմ քաղաքում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն:

1970-ականներին լրջորեն սկսել է աշխարհագրական հետազոտությունները՝ որպես զբաղմունք: 1981 թ. տեղափոխվելով Լոնդոն՝ առիթ է ունեցել հետազոտելու Բրիտանիայի և Եվրոպայի գրադարաններում եղած քարտեզագրական հարուստ ժառանգությունն ու ծավալուն տեղեկությունները:

2008 թ. Հայաստանի քարտեզագրությանը մատուցած ծառայությունների համար Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհել է պատվո դոկտորի կոչում, իսկ 2013 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:



Այս աշխատանքի անգլերեն տարբերակը հրատարակվել է 2015 թ.:
Հատորն անգլերենի հայերեն տարբերակն է, որի մեջ առկա են որոշ
փոփոխություններ տեքստի և քարտեզների մեջ:

Աշխատությունն առաջին հերթին հրատարակվել է որպես Հայաստանի
քարտեզների հատուկ ցուցահանդեսի ուղեցույց, որտեղ ցուցադրվել են
այն քարտեզները, որոնք արտատպված են սույն աշխատության մեջ:
Առաջին ցուցադրությունը եղել է Երևանի Կոմիտասի թանգարանում,
սպա ՀՀ Արտաքին գործերի նախարարության և դեսպանությունների
միջոցով շրջագայել է Ռուսիայի, Ավստրիայի, Սլովակիայի, Լատվիայի, Լիտվայի,
Էստոնիայի և այլուր:

Գրքի նպատակն է հանրությանը ներկայացնել մի շարք քարտեզներ, որոնք
կօժանդակեն ընթերցողին որոշ չափով հետևելու հայոց պատմությանը
ավելի քան 2600 տարիների ընթացքում: Պետք է նշել, որ բոլոր
պատմական իրադարձությունները չեն, որ կարող են ներկայացվել և
բացատրվել լոկ քարտեզներով, բայց քարտեզը թերևս իրական վիճակը
ցուցադրելու լավագույն միջոցներից մեկն է:

Քարտեզների աղբյուրներն են հնագույն արձանագրությունները, հունա-
հռոմեական, պարսկական, արաբական, վաղ հնադարյանից մինչև ուշ
միջնադարյան եվրոպական գրականությունն ու քարտեզները, որոնք
ներկայացնում են համաշխարհային քարտեզագրական ժառանգության
լավագույն նմուշները:



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am
www.book.am